

2(695)
2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիտնականին եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Լусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀՈԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՌՅԱԿՆԵՐ



Հոգիս՝ տանը հաստատվել -
Տիեզերքն է ողջ պատել.
Տիեզերքի տերն եմ ես,
Ո՞վ է արդյոք նկատել:

Իմ սո՛ւր, արթուն ականջում
Մի խոր ծեն է միշտ հնչում,
Անհո՛ւմ, անքո՛ւն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանչում:

Արևելքի եղեններին իջավ պայծառ իրիկուն,

Հեքիաթական պալատներում ըսպասում եմ իմ հոգուն.
Ի՛նչ եմ շինում ես ցեխերում, աղմուկի մէջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան, դեպի էնտե՛ր, դեպի տուն...


Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ Նրա անլուռ կանչն ու շունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունչը ամենուր:

- Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

ՀՐԱՆՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Թումանյանից առաջ մենք ամեն ինչ ունեինք և ոչինչ չունեինք, ինչպես որ աստվածային Բանից առաջ ամեն ինչ կար և ոչինչ չկար: Մենք հող ու հայրենիք, բարեկամ և թշնամի, ջանք ու տառապանք, խիճոկ ու ծիծաղ և անզան հազարամյա մշակույթ ունեինք՝ բանարվեստի, գաղղարվեստի, երգարվեստի մի ամբողջ լեռնաշխարհ, որի վերընթացն իզուր էր լինելու, եթե չպակվեր իրենով Արարատով: Մաքուր վաղորդայնի պես, որպես մաքուր վաղորդայն՝ Թումանյանը ցողվեց այդ ամենի վրա, փռվեց, սփռվեց, բացեց, բացահայտեց այդ ամենն ու իրեն այդ ամբողջի մեջ և հավաքեց այդ ամբողջը իրենով ու իր շուրջը: Այդպես մեկ էլ հայրենիքն է իմաստ ու նշանակություն տալիս իր մեծուհիների ջանքին, իր կենդանի ու անկենդան գոյին:



Թումանյանից առաջ մենք ամեն ինչ ունեինք և ոչինչ չունեինք, ինչպես որ աստվածային Բանից առաջ ամեն ինչ կար և ոչինչ չկար: Մենք հող ու հայրենիք, բարեկամ և թշնամի, ջանք ու տառապանք, խիճոկ ու ծիծաղ և անզան հազարամյա մշակույթ ունեինք՝ բանարվեստի, գաղղարվեստի, երգարվեստի մի ամբողջ լեռնաշխարհ, որի վերընթացն իզուր էր լինելու, եթե չպակվեր իրենով Արարատով: Մաքուր վաղորդայնի պես, որպես մաքուր վաղորդայն՝ Թումանյանը ցողվեց այդ ամենի վրա, փռվեց, սփռվեց, բացեց, բացահայտեց այդ ամենն ու իրեն այդ ամբողջի մեջ և հավաքեց այդ ամբողջը իրենով ու իր շուրջը: Այդպես մեկ էլ հայրենիքն է իմաստ ու նշանակություն տալիս իր մեծուհիների ջանքին, իր կենդանի ու անկենդան գոյին:

Ապա մի, եթե կարող եք, բուն իսկ ձեր գոյությունը մերժելով անհայտի ծովին տվեք իրեն, տեսեք ինչ էր ու ի՞նչ էր երևում իր հետ, տեսեք նախնիներից բան մնո՞ւմ է իրենից հետո, իրենից հետո բան գալի՞ս է, դուք ինքներդ մնո՞ւմ եք, տեսեք համայն մարդկության մեծերն ու մարդկայնությունն ինքը ձեզ համար մնո՞ւմ են, հայոց ձեր լեզուն գո-

լիմ է վերծանել, արծարծել, թոթափել, նորել ու յուրացնել տարալեզու աստվածային գիրը, որ բոլոր ժողովուրդների ու ժամանակների դավանանքն է: Գրեթե այս մասին կամ հենց այս մասին ասված է. «Ես աստծո որդին եմ՝ որովհետև իր դրվածն եմ, և հայրը՝ որովհետև ձեր հոգիներում իրեն ես ծնեցի, ես ինքն աստվածն եմ»: Կամ այսպես. «Ես ձեր կանչով եկա և ձեր որդին եմ, և հավատը առ ձեր իսկ գոյության ձեզանում ես արթնացրի և ես ձեր հայրն եմ»: Վեհորեն բարձրի մեր համազգային, մարդկության այս հայ ընտանիքի ծագումն էր ինքը և առնչումը այդ վեհին ու վերին: Առանց Թումանյանի մեզ համար օտար տաճարների խորթ, եթե ոչ թշնամի, կուռքեր էին լինելու մարդկության ամենապայծառ ճակատները: Իսկ այսպես՝ իր կենդանի, շենշող, բարձր ներկայությամբ՝ մեր իսկ ինքնաճանաչումը և, պատկառանքից գատ, հաճախ նույնիսկ սերն ու մտերմությունն է ցույց տված ամենաայլազան ժողովուրդների ու լեզուների աշխարհներից: Իսկ եթե պատահում է չի ծնվում, մեզանում չի թոթոմ այդ հաղորդությունը, իր խրախուսիչ ներկայությամբ վստահ՝ մեզ սուտ ու անկատար են երևում այդ աստվածությունները և ոչ մենք ինքներս:

ԹՈՒՄԱՆՅԱՆՆ ԱՊՐՈՒՄ Է ՄԵՐ ՄԵՋ ԵՎ ՄԵՋ ՆԱԵՎ ԱՊՐԵՑՆՈՒՄ

Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյակի առթիվ բազմաբնույթ միջոցառումներ են անցկացվել և շարունակվում են Հայաստանում, Ափրոնիում և հայաշատ այլ բնակավայրերում՝ մանկապարտեզից մինչև բարձրագույն ուսումնական և կրթամշակութային այլ հաստատություններ, քանզի Թումանյանը բոլորի մեջ է՝ մանկուց մինչև խոր ծերություն:

«ՃԱՍՓՈՐԻ ՀՊԳԻՆ», «ՈՒ ՆԱՅԵՍ, ՆԱՅԵՍ»

Այսպես է կոչվում ցուցահանդեսը, որ նվիրված է երկու մեծ հայերի՝ Հովհաննես Թումանյանի և Հրանտ Մաթևոսյանի ճանապարհորդություններին (փետրվարի 12-ին լրացել է Հ. Մաթևոսյանի ծննդյան 89-ամյակը): Ցուցասրահի մուտքից ոտնահետքերը աջ և ախյակ տանում են դեպի երկու համաբերել լռեցիների անցած ուղիները: Բայց իրականում այն այցելուների՝ ապրողների ճամփորդությունն է՝ դեպի երկու մեծ գրողների ներքո, որը սովորեցնում է՝ ինչպես պետք է ապրել, ինչպիսին պետք է լինի ճշմարիտ գրողը, մտավորականը, իսկական ազգասերը, հայրենասերը:

Իմբազրատան անդամ, նա հրաժարվում է՝ ասելով. «Լոնդոնը հո՛ւ Լոնդոն չէ, ես ի՛նչ գործ ունեմ այնտեղ» և հավելել, որ բազմաճյուղ ընտանիքը ոչ միայն կերակրվելու, այլև մայրենի լեզվով կրթվելու կարիք ունի:

«ՃԱՍՓՈՐԻ ՀՊԳԻՆ», «ՈՒ ՆԱՅԵՍ, ՆԱՅԵՍ»

Այսպես է կոչվում ցուցահանդեսը, որ նվիրված է երկու մեծ հայերի՝ Հովհաննես Թումանյանի և Հրանտ Մաթևոսյանի ճանապարհորդություններին (փետրվարի 12-ին լրացել է Հ. Մաթևոսյանի ծննդյան 89-ամյակը): Ցուցասրահի մուտքից ոտնահետքերը աջ և ախյակ տանում են դեպի երկու համաբերել լռեցիների անցած ուղիները: Բայց իրականում այն այցելուների՝ ապրողների ճամփորդությունն է՝ դեպի երկու մեծ գրողների ներքո, որը սովորեցնում է՝ ինչպես պետք է ապրել, ինչպիսին պետք է լինի ճշմարիտ գրողը, մտավորականը, իսկական ազգասերը, հայրենասերը:

մանյանի գալու: Երեք օր Թումանյանը մնաց այդտեղ: Նա ցանկություն հայտնեց տեսնել Փարվանա լիճը: Բայց այդ ժամանակ լիճը փոքրկված էր, և չի կարողանում գնալ, ու ինչպես թանգարանի ցուցադրության լուսանկարից է երևում, Թումանյանը հեռադիտակով է նայում Թմկաբերդի ավերակները: Տեղյակները տանն էլ Թումանյանը գրում է իր հայտնի պոեմի նախերգանքը, որի առաջին քառյակում արտասանում է սեղանի շուրջը բոլորած զանազանների առջև:

«ՃԱՍՓՈՐԻ ՀՊԳԻՆ», «ՈՒ ՆԱՅԵՍ, ՆԱՅԵՍ»

Յետաքրքիր են Անի կատարած ուղևորության զանազան դրվագները: Այդ մասին հուշում է Անիի ավերակների մոտ Ավ. Իսահակյանի հետ լուսանկարը: Անիի տպավորությունների մատյանում Հովհաննես Թումանյանն իր փոքրիկ քառատողն է հավերժացրել այդ օրերին.



կերթությունները ղեկավարելուց, մանավանդ որ առողջական վիճակն էլ լավ չէր: Դիմումը ձեռքին գնում էր հրաժարական տալու, բայց ճանապարհին տեսնելով մահացած գաղթականների և երեխաների, ասում է, որ քանի հայ մարդը սովից մեռնում է, և իր անունը, հեղինակությունը պետք են, որ նա չմեռնի, ուրեմն կշարունակի այդ աշխատանքը:

ՀՈՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 5-ՐԴ ՀԱՏՈՐԻ ԵՆՈՐԶԱՆԳԵՐ

1 Ընթացքի մեջ է թուամայանի երկերի 10-հատորյակի վերահրատարակությունը, որը 2017թ. նախածեղել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը Հովհաննես Թումանյանի թանգարանի հետ մեկտեղ: Վերահրատարակված վերջին 5-րդ հատորի շնորհանդեսն էլ տեղի ունեցավ Թումանյանի ծննդյան օրվա առթիվ «Հրամո Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանում կազմակերպված միջոցառումների շրջանակում: Հատորի խմբագրակազմի անդամները շնորհանդեսին ներկայացրին վերահրատարակված գրքի առանձնահատկությունները:

Հերիքնագ ՈՐԿԱՆՅԱՆ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն:

Համաժողովրդական սեր վայելող ազգային բանաստեղծի ստեղծագործությունը հստակ գեղագիտական ծրագիր է՝ ուղղված ժամանակակիցներին և սերունդներին: Այս գիտակցումով էլ շատ գրականագետներ, մասնավորապես՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը, մի ամբողջ կյանք միկրեցին Թումանյանին՝ առաջնահերթ մշակութային խնդիր դնելով Թումանյանի գործի և ստեղծագործության հանրահռչակումը, բացահայտումը և տարածումը: Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը տասնամյակներ շարունակ զբաղվել է Թումանյանի ստեղծագործությունների հրատարակությամբ և կատարել է բազում ուսումնասիրություններ:



Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի վերախմբագրված հրատարակությունը՝ այսօր արդեն 5-րդ հատորի արտահայտությամբ, կատարվում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից իրականացվող ռազմավարական ծրագրի շրջանակում: Ընդհանուր առմամբ Թումանյանի ստեղծագործությունների հրատարակության ծրագիրը նախատեսված է 10-հատորյակի վերահրատարակումով: Ինստիտուտի աշխատակիցներ Սուսաննա Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը, նաև բանասիրական գիտությունների դոկտոր Ազատ Եղիազարյանը մեկը մյուսի հետևից գիտական համրության սեղանին են դրել Թումանյանին նվիրված իրենց ուսումնասիրությունները: Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ զբաղվում է նաև ինստիտուտի հայ մոր գրականության բաժինը: Կարևորագույն խնդիր է դրված աշխատանքային խմբերի առջև՝ բանասիրական ճշգրտումների մինչև բնագրերի մեկնություններ: 21-րդ Թումանյանը թողել է բազում սևագրություններ, անավարտ հատվածներ, ելույթներ, անծնական մշտններ: Այս ամենն անչափ կարևոր է յուրաքանչյուր երկի ստեղծագործական պատմության, Թումանյանի գեղագիտական ծրագրերն ընկալելու համար: Այս հատորի վրա աշխատել են մարդիկ, որոնք աշխատել են մի քանի հատորների վրա, ըստ էության, նրանք նվիրյալներ են եղել, որոնք առաջնորդվել են գիտական և բարոյական պարտավորության մղումով: Ցավոք, վերջին տարիներին մեզ հետ չեն Վարդան Դևրիկյանը, Վլադիմիր Կիրակոսյանը, Հասմիկ Աբեղյանը, որոնք շատ մեծ գործ են արել այդ հատորների համար: Այսօր աշխատում են գրականության ինստիտուտից բանասիրական գիտությունների թեկնածուներ Նուրե Մկրտչյանը և Անի Ղազարյանը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Եվա Մնացականյանի ղեկավարությամբ:

Հատորի գլխավոր խմբագիրը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանն է, որը մեծ պատասխանատվությամբ կատարում է խմբագրական իր աշխատանքը:

Անի ԵՂԻԱԶՐՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Թումանյանի վերածնունդը մեր մեջ թող վերածնունդ լինի նաև մեր հայրենիքում և յուրաքանչյուր հայի կյանքում ու շրջապարծային լինի:

2018-ին այդ մտքի կարևորությունը՝ Թումանյանի լիակատար երկերի 10-հատորյակի վերահրատարակումը, մի քանի բանով էր պայմանավորված. նախ, որ արխիվներն ուսումնասիրելիս մոր մյուսեր էին հայտնվել և ոչ միայն արխիվներում, այլև՝ անհատների մոտ: Իհարկե, երբ մենք հիմա վերահրատարակում ենք, շատ վստահ չենք, որ այդ «լիակատար» բառը տեղին է օգտագործվում: Եվ առհասարակ, մեծերի դեպքում «լիակատարը» շատ պայմանական գործածելի բառ է:

Բայց առանցքայինը, որ պահպանվում է, անշուշտ, ջրբաշյանական խմբի առեղի աշխատանքի շուրջ է արվում: Լրամշակված հրատարակումները կզան նաև հատորների՝ ժամանակին եղած առավել նվազ քանակով հրատարակությունների խնդիրը լուծելու, որոնք առավելապես վերաբե-

րում են 8, 9, 10 հատորներին: Մարդիկ, հաճախ են դիմում թանգարանին, թե որտեղից կարող են գտնել այդ հատորները: Վերադառնալով 5-րդ հատորին՝ ուզում են նաև իմ երախտագիտության խոսքն ուղղել անձանց, որոնք ուղիղ ներգրավված չեն եղել աշխատանքների մեջ, բայց մեծ հոգածություն և սրտացավություն են ունեցել Թումանյանի գրքի նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի, որ գիրքն ամբողջական լինի: Եվ ես ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց և պարոն Եղիազարյանին, որ իր դիտարկումներն է արել և Ավարդ Ջիվանյանին, որ հատորի առանձնահատկությունների հիմնական բաժնի աշխատանքներն է համակարգել:

Չի եղել խմբի աշխատողներից որևէ կողմի անձի գործոն, այլ եղել է հանունի գաղափարը, հանուն այն բանի, որ ընթերցողին տրվի Թումանյան՝ հնարավորինս մաքրամաքուր և առանց խմբագրումների:

Եվա ՄՆԱԳԱԿԱՆՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր:

Որպես Թումանյանի 5-րդ հատորի աշխատանքի ղեկավար՝ ուզում եմ իմ խոնարհումը բերել այն մարդկանց, որոնք 1988-90-ականներին՝ մութ ու ցուրտ տարիներին մեծագույն նվիրումով մտահղացել են Թումանյանի ակադեմիական 10-հատորյակը ստեղծելու ծրագիրը և իրականացրել են: Բազմահատորյակի առաջին հատորները հրատարակվել են 1988-1991թթ. իսկ, 1994-ին ընթերցողի սեղանին է դրվել երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորը՝ Էդ. Ջրբաշյան, Լուսին Կարապետյան, Անահիտ Վարդանյան, Գուրգեն Գասպարյան, Իրինա Վարժապետյան թումանյանագետների ջանքերով: Խորին հարգանքով և խոնարհումով ուզում եմ բարձրաձայնել այն մարդկանց անունները, որոնք թանգարանի հետ սկսեցին Թումանյանի 10-հատորյակի վերահրատարակության աշխատանքները, բայց հասցրին տեսնել հրատարակված ընդամենը 4 հատորը: Հասմիկ Աբեղյան, Վլադիմիր Կիրակոսյան, Վարդան Դևրիկյան՝ գրականագետներ, որոնք անուրանալի ներդրում ունեն թումանյանագիտության մեջ և մեծագույն պատասխանատվությամբ ու սիրով կատարեցին այդ ամենը: Գրականության ինստիտուտի թումանյանագիտության բաժինը շարունակում է երախտավորների աշխատանքը:

5-րդ հատորը ներառում է Թումանյանի գեղարվեստական արձակը՝ պատմվածքներ, հեքիաթներ, անավարտ դրամատիկական երկերի հատվածներ, հեքիաթների թարգմանություններ, սևագիր և անավարտ էջեր, լռեցիների վերաբերող զանազան զվարճալի պատմություններ և անեկդոտներ:

Այս և այլ հավելումների արդյունքում շուրջ 30 տարի առաջ լույս տեսած 5-րդ հատորի համեմատ վերահրատարակված հատորն ունի մոտ 300 էջի ծավալային տարբերություն. նախկին 831 էջի փոխարեն այս հատորն ունի 1176 էջ:

Ամենայն հայոց բանաստեղծի արձակ գործերի բացառիկ արժեքավոր, խորքային գեղեցիկ այս հատորը, որ մշտապես սիրելի է եղել ընթերցողներին իր բովանդակությամբ, թումանյանական հանճարի չքնաղ փայլատակումներով, ոչ միայն հարստացվել է բանասիրական ճշգրտումներով ու բնագրային թվով, այլև դարձել է աղբյուր թումանյանագիտական մոր ուսումնասիրությունների ու բացահայտումների համար:

Ընդհանուր առմամբ 33 ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը՝ ներկայացնելով նաև իր դիտարկումները. «Այն, ինչ հատորի բովանդակությունն է, գերազանց է, որովհետև Թումանյանն է հեղինակը: Թումանյանի հատորները պոլիգրաֆիական առումով էլ պետք է լինեն անթերի: Այսօրվա սերունդը կցանկանա Թումանյանին կարողալ ավելի գեղեցիկ ձևավորված հատորներով: Թումանյանը ետ չպիտի մնա ժամանակի պոլիգրաֆիական տեխնոլոգիաների զարգացումներից»:

Ինչ մտում է ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի և Թումանյանի թանգարանի համագործակցությանը, որը միշտ եղել է, վատ չէր լինի, որ դրան տրվեր գրավոր, իրավական տեսք, որն առաջարկեց Թումանյանի թանգարանի ղեկավար Լուսինե Դարախանյանը: Վերջինիս առաջարկով Յու. Սուվարյանը նաև կատարեց 5-րդ հատորի գինեծն:

Գինով օժված էջերին իրենց ստորագրությունները թողեցին խմբագրական խորհրդի անդամները և այլ կատարողներ: Գինով օժված հատորը համեմակեց Հովհաննես Թումանյանի թանգարանին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԹՈՒՄԱՆՅԱՆՈՎ՝ ՄԵՆԵ ԿԱՆԵ: ԱՌԱՅ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ՝ ՄԵՆԵ ԳԿԱՆԵ

1 Տարագգի-տարալեզու գրականության մեծ աշխարհի մեծ մտնում ենք Թումանյանով՝ և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է: Առանց Թումանյանի՝ այդ եզերքը մերը չէ, այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու ցածր թշնամանքով:

Անցյալի և ապագայի, անձնականի և ընդհանրականի, ազգայինի և համամարդկայինի, ժամանակավորի և հավերժականի մեկ և ընդհանուր սահմանին կանգնած՝ նա ժամանակավորից պատմականություն է պահանջում և հավերժականից ներկայություն, համամարդկայինից ստույգ հայեցողություն է պահանջում և հայեցիցից համամարդկայություն. մշակույթները եթե համամարդկային չեն՝ մշակույթ չեն և չեն կարող ու չպետք է ճանփորդեն հայրենիքների ու ժամանակների միջով: Այդպես՝ գուտ ոսկին է սահմաններն անցնում և բնությունից քաղաբերված օրենքները: Այդպես՝ վերահսկման ու փոխվերահսկման պայմաններում՝ իրենց տեղերում ու ժամանակներում, ճիշտ է, գոյանում, բայց և պարտադրորեն քայքայվում են այն վատ նկրտումներն ու հավակնումները, որ ուղղակի դրսևորում են մարդ-գազանի, բայց մարդկային մշակույթի, դավանանքի ու գաղափարախոսության տեսք են առնում և մոյսիսկ բանակներ կապում:

Այն ժողովրդի մեջ՝ որ աշխարհի էր բերել Թումանյանին, այն վայրերում՝ ուր Թումանյանի հոգին մարմնացել էր մի ճկուն, խիզախ ու մաքուր հասակով, հին բարձր կեցության բեկորներ կային, որոնցից առաջինն իհարկե մայրենին էր, ապա բեկված վանքերն ու պարիսպներն ու կամուրջները... ապա մույսիսկ գրի պատասխաններ իր հեռավոր նախնու ազնվական վիճակի մասին: Բայց իրենով վկայվելու էր շատ ավելի մեծ բան, քան նախնու և նախնիների իշխանական զորությունը, քան որոնադիրների-մատենագիրների-այգեպանների մշտնադրողից հազարամյա այս սև անապատում հայոց հանգրվան կապելու եվրո-ռուսական ջանքի հաջողությունը. իրենով վկայվելու էր, թե արև աստվածը, գառնուկ ախպերը, մարդ արարածն առհասարակ, ազատ կյանքն ինքը չարի հարվածների տակ մեկընդմիջ՝ շտ են մտնում քարայր, վիշապօժի շապիկ, գառան մորթի... հավիտյան են տրվում մահվան, քնի, թմբիրի գերության, թե՛ ազատությունը կարող է քարոթություն հանել մարդուն ու բազմեցնել իր նախասահմանված գահին, մի գերությունից արձակված մարդը չի՞ տրվում մի այլ ու թերևս վատթար գերության:

Ինքն ահա չտրվեց. իրենով՝ ազատությունը մեր հորիզոնից բարձրացավ կատարյալ գեղեցկության կերպարով:

Ծեծված, կողոպտված, ոտնատակի այգու պտուղ՝ նա դառն էր լինելու և էր. առավել քան իրենից այս ժողովուրդը ուրիշ ոչ մի բերանից այդքան դառն նախատինքն չի լսել:

Ծվատված, բաժաժված, միմյանցից խլխլված ժողովրդի գավակ՝ նա պիտի հայրենիքի զինվոր լիներ և էր. միայն նախախնամությամբ և միայն երեսուն տարով՝ զինվորի նրա կյանքը ետ պահվեց այն ջոկատից, որ հայրենական հողի թշնամական բաժանագծի վրա գնդակօժից և քիկուցից, և ճակատից. զինվորի տուրքը կյանքով է տրվում, երեսուն տարի անց զինվորի իր տուրքը նա մարեց եղբայրների, Թումանյանի իր և չորս որդու կյանքով, և փանփուշտները ճայթեցին թե քիկուցից, թե դեմառդեմ ճակատից:

Դեպի իմացության ու կենցաղի լույս համաժողովրդական ընթացքի ուխտավոր՝ նա լուսավորիչ էր լինելու և էր. դպրոցականի համար որպես «անցնելու մյուս» գրված նրա առանձնավոր ու զրույց գրքից գիրք և հասակից հասակ անցնելով՝ արդեն հարյուր տարի գալիս են և դեռ մեզնից ու մեր թոռներից են անցնելու:

Նրա ահագանգի ու արագ արձագանքի, նրա ձեռնարկումի, նրա մտքի ու եռանդի արդյունք է կրթա-գիտական, գրական-մշակութային, գիտա-մշակութային այն իմնավարաբ հաստատությունները, որ մի ժողովրդի վերածնունդն են ազգի և ազգը մղում պետականություն:

Ամենահեղափոխական ոչ մի հեղափոխական չի կարող մեղադրել, թե պատերազմների ու հեղափոխությունների իր ժամանակ նա դրոշներից հեռու էր կանգնած, ինչպես և ազգային ցավից խելագարված որևէ ազգայնական՝ թե դրոշը նրա ձեռքին չէր:

Կործանման ու ողբերգական իրադարձությունների ժամանակակից՝ նա պիտի իր ժողովրդի ողբերգուն լիներ և էր: Իր ժամանակի և ոչ մի երևույթ չի կարող վկայել՝ թե իր բուն խորքերում նա չի եղել, իր ժամանակի ոչ մի օրը չի կարող ասել՝ թե չի հիշում նրան, ոչ ոք՝ ոչ օտարազգի սարսափահար պանդուխտը, ոչ մեռնող եղջերուն, ոչ աղոթքի ծնկած ծերը՝ չի կարող կշտամբել, թե իր օրհասի պահին, իր վեհանալու հրաշքին նա ներկա չէր:

Բայց նա այդ բոլորի ու ամենի գերին չէր, իր կործանված հայրենիքի հետ՝ ատելության կաշկանդյալը չէր և հույսի փրկված ծվեների հետ՝ երախտի կաշկանդյալը չէր - նա տեր էր այդ ամբողջի ու ամենի վրա, այդ ամբողջն ու ամենը նրա տիրական ճախրի ներքո էր: Այդպես միայն զորավար-արքաներն են լինում:

Այդ ամբողջը նրա աշխարհն է՝ Թումանյանի թագավորությունը, և մենք այդ թագավորության հպատակներն ենք, մենք՝ իրենից հետո եկածներն, նրանք՝ իրենից առաջ ապրած-անցածները, մարդիկ, կենդանիներ, ազգեր, ցեղեր, ձևեր, կերպեր, երևույթներ, պատմություն, առասպելներ, գրույցներ, լեզու, երեխաներ, լույս, կարոտ, սեր, մահ, հաշտություն, թշնամանք... և ուրիշ ոչ մի տեղ այնքան հեշտ ու թեթև չեն թրթռում, ապրում, խաղում, ինչպես նրա ժպտուն շնչի տակ: Մտիր հայոց Բանի այդ աշխարհի և հարյուր տարի ու հազար տարի խաղա, կռվիր, հաշտվիր, երգիր, ծիծաղիր, խորհիր, խոսկա, ձգտիր, ճանաչիր, բարեկամացիր, թշնամացիր... եղիր:

Եվ ուրիշ ոչ մի աշխարհ՝ ոչ գրի ու ոչ էլ իրական՝ մեր երեխային, մեր մարդուն, ինքներս մեզ այնքան վստահ չենք դրկում ճանփորդության, ինչքան Թումանյանի թագավորություն, և ուրիշ ոչ մի աշխարհում ոչ ոք ու ոչինչ այնքան վաղաժամոր ու մտերիմ չէ, ինչքան Թումանյանի աշխարհում, մեր ծնունդից առաջ ասես այնտեղ ենք ապրել, մեր այս երկիր ասես այնտեղից ենք եկել:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎԿԱՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



Թունանյան Բանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարախանյանը «Էքզիստենցիալ ընկալումը թունանյանի ստեղծագործություններում» թեմայով հոդվածաշար է սկսել:

Ներկայացնում ենք այդ շարքից նրա առաջին հոդվածը:

Ընկերամշակութային փոխակերպումների վայրկյաններում, կյանքի գրեթե բոլոր ոլորտներում ակնհայտ է գոյութենական լարվածությունը: Ուշագրավ է, որ այդ լարվածությունը նախագծվում և արտացոլվում է ոչ միայն մամուլի էջերում ու հրապարակումներում, այլև ֆիլմարվեստում և գեղարվեստական գրականության մեջ: Եվ, մեծ հաշվով, արվեստագետները, գրողներն ու հրապարակախոսները կարող են ինչպես նպաստել, այնպես էլ թուլացնել գոյութենական լարվածությունը:

Սույն հոդվածի մեջ մենք փորձել ենք ուսումնասիրել կյանքի ընկալման համապատկերը Հոմերոսից մինչև Թունանյանի ստեղծագործություններում՝ հաշվի առնելով տվյալ դարաշրջանի և պատմաքաղաքական ու հասարակական ծանր կացությունը, և՛ բանաստեղծի անձնական կյանքը՝ ներկայացնելով թունանյանի՝ որպես հայոց անհուն տառապանքը կրող և իր ստեղծագործություններով բյուրեղացնող մեծագույն գրողի գոյութենապաշտությունը: Արցախի կորստի և Հայաստանի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերների համապատկերին զուգահեռվում են թունանյանի պարած ժամանակաշրջանի ազգային ողբերգության նույնական դրսևորումները. տարբերությունը ընկալման և ներկայացման մեջ է: Ապրելով իր հայրենիքի համար պատմական ծանր ժամանակաշրջանում, թեկնելով իր մեջ ոչ միայն անձնական, այլև համամարդկային ու համազգային անվերջանալի տառապանքներն ու ողբերգությունները, այնուհանդերձ, բանաստեղծն իր մեջ պահպանել է գոյութենապաշտությունն ու ներդաշնակության և բարեշրջության երազանքը, կյանքը վերաբերող համամարդկային վսեմ գաղափարները, հանուն բարձրագույն արժեքների զոհաբերվելու պատրաստակամությունը:

Կատարելության ու իրականության սուր հակադրությունը բանաստեղծի գոյութենական ընկալումների և կատարելատիպի միջև խզում է համաճարտել, նա այդպես էլ չի դարձել իրերի ու հանգամանքների ենթական, ավելին, իշխանություն է հաստատել դրանց վրա՝ հռչակելով բարոյական իր տեսությունը:

Յե՛ն ազահ մարդ, հե՛ն անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ:

Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

Հայդեգերյան այս էքզիստենցիան արտացոլվել է ոչ միայն ուշ, այլև վաղ շրջանի գործերում, անձնական, հանրային և ազգային կյանքի ծանրագույն շրջաններում: Եթե Գրիգոր Նարեկացու դեպքում տեսնում ենք ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո, ապա Թունանյանի պարագայում դա ներքին հաղորդակցություն է տիեզերքի, հավերժության, անհունի հետ: Իրական աշխարհն ու անդրաշխարհը, մարմնի ժամանակավոր կյանքը և մարդկային հոգու անմահությունը համաքայլ են:

Խոհափիլիսոփայությունը կյանքի ու մահվան, մարդու բնույթի և ճակատագրի, մարդու և բնության միասնության շուրջ ներհատուկ է թունանյանի գրեթե ամբողջ ստեղծագործությանը: Ապրումակցման, ներհայեցումի, խոր նույնացումների և ինքնամուսկավորման արտացոլմամբ շոշափում ենք գրողի ներքին ամբողջության համակարգը. «Ա՛խ, ես երանի // Կայծա՛ր է լինելի, // Որոտ-ճայթյունով // Մըռայլ ամպերից // Ժայթքի ըմբոստ, // Չարկեի ուժգին, // Պատռեի խավար // Կամարը երկնի, // Ցույց տայի մարդուն // Գաղտնիքը վերին, // Որ տեսնե՛ր՝ այնտեղ // Ի՞նչ բան կա անտեղ, // Կան ո՞վ է ճրտած, // Եվ ո՞ր է աստված...»: Անմահության խորհուրդին ենք հաղորդակցվում «Դեպի անհունը» ստեղծագործության մեջ:

Փա՛ռք անպատում մըխիթարչին,
Փա՛ռք խորհուրդին անմահության.
Նա է կըրում հույսը վերջին
Ու շոգն անշեջ, արարչական.
Փա՛ռք խորհուրդին անմահության...
Վիշտը հանգչում է նրա մեջ,
Ապրում սերը անապական.
Փա՛ռք խորհուրդին անմահության...
«Դեպի Անհունը» բովանդակային առնչություններ ունի մի շարք ստեղծագործությունների հետ՝ «խորհրդավոր մեռելը», «Ընկերիս», «Ժամանակն անվերջ», «Երևել քիթեռ ես լինելի», «Ցուլուն աստղեր ջինջ եթերում», «Դու գնում ես անդրած ճամփա», «Տիեզերքի ընթերցումը», «Սիրիուսի հրաժեշտը», որոնցում ևս գոյութենական դատողությունները մնում են կենսունակ՝ բանաստեղծի համար ամենածանր պայմաններում անզամ չառաջացնելով սահմանաբաժան վերացական ու առարկայական իրականության միջև:

Հավերժը, անհունը կամ աստվածայինը, կապված լինելով բանաստեղծի ներաշխարհի հետ, դառնում են նրա անհատականացված գիտելիքը, համոզմունքն ու աշխարհայացքը: «Անհայտը», «Վերը», «Բարձրը», «Անհունը» ներդաշնակ, երջանիկ կյանքի թունանյանական իդեալի խորհրդանշական համակարգն են: Եվ ոչ մի ողբերգական դիպաշար, ոչ մի պատում այդպես էլ ի գործը չեղավ խաթարել նրա ներքին վիպական խաղաղությունը: «Անուշ» պոեմում անզամ անմուրազ մեռած սիրահարները իրենց երջանկությունը գտնում են երկնքում, և երկինքն իմաստավորվում է սիրով: Բանաստեղծը հաճախակի է նայում երկնքին, ինքնամուսկավորում և արժևորում նրա հետ շփումը. «Սքանչելի է երկինքը, բայց ո՞վ է գլուխը վեր բարձրացնում,- ասում է բանաստեղծը: Երկինքն իմաստավորվում է որպես բարձրագույնի, վեհի ու կատարյալի մարմնավորում, արտապատկեր ու վերագրում, որպես միջնորդավորված կապի օղակ իր և Աստծո միջև: Յե-

րոսն իր երջանկությունը պատկերացնում է Անհունի մեջ:

Աստվածայինը, հավերժականը, տիեզերականը հազար ու մի անուն ունեն թունանյանի աշխարհում՝ Անճառ մին, Անվախճան, Աստված (ոչ միայն որպես դավանաբանական էակ, այլև տիեզերական կատարելություն, հավերժական խորհուրդ): Մարդկային կյանքի անկայունությանն ու անհաստատությանը, բնականաբար, նաև անցողիկությանը հակադրվում է հավերժականը. «Եվ ի՛նչ է մարդը, և ի՛նչ իրեն կյանք,-// Եղծական ձևեր, ծայրեր, շարժումներ: //Հավերժականը չունի կերպարանք, // Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեբ...»: Գոյութենական հիասթափության վիճակից դուրս գալու ելքը թունանյանը կրկին հավերժական ու բացարձակ աշխարհի՝ Աստծո հետ մարդու կապի հաստատման մեջ է տեսնում: Աստծո հետ կապը, երկինքը, տիեզերքը սեփական էքզիստենցիայի բացահայտումն են:

Որ հայացք ես ինձ տրվել վերամբարձ՝
Սուզվելու վերին սահմաններն արփի,
Որ միտք ես տրվել երկնաճե՛ն ու բաց՝
Չափելու անտեղ բացերն անչափի,
Որ կապել ես մեզ, հոգիս քեզ արել՝
Հոգուս անհունի հըրձվանքը տալով,
Բարձրը ճակատիս ժրպիտ ես վառել,
Վառել, զարդարել արփենի փայլով,
Անթարթակ աչքով, անխարխափ հոգով
Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,
Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,
Ու զիշերները ահավոր ու պերճ:
Վերանում է վեր հոգիս զըվարթուն-
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անտարբեր աստված:

Այս բանաստեղծության մեջ Հայդեգերյան ազատությունն է, որի մեջ մեծ է պատասխանատվության բեռը: Հայդեգերի համոզմամբ՝ ազատ լինելը՝ նշանակում է չգործել և չմտածել այնպես, ինչպես գործում և մտածում են ուրիշները, նշանակում է որոնել և գտնել ինքը քեզ, և եթե մարդն ամբողջությամբ տնօրինում է իր գոյությունը, ուրեմն պարտավոր է պատասխան տալ իր բոլոր գործողություններին համար: Միաժամանակ, նա պատասխանատու է ոչ միայն իր, այլև բոլորի համար: Բոլորի համար պատասխանատու լինելը մարմնավորվել է թունանյանի տարբեր ստեղծագործություններում: Ահավասիկ կոթողային այս քառյակը, որտեղ նաև արտացոլված են Հայոց ցեղասպանության տառապանքի միջով անցած բանաստեղծի էքզիստենցիալ հիասթափությունն ու ընկճվածությունը, որն արդիական է նաև այսօր:

Բերանն արնոտ Մարդակերը են անբան
Հազար դարում հագիվ դառավ
Մարդասպան,
Չեռքերն արնոտ զընում է նա դեռ
կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Այս քառյակն ընկալվում և ծածկագերծվում է որպես և՛ ազգային ողբերգության, և՛ աշխարհի մեռնող քաղաքակրթության փոխանցում: Ինչպես տիեզերական ներդաշնակության, այնպես էլ ընդհանուր համերաշխության իրական կարգազանցը անձնապատան ու անձնիշխան մարդն է, որը չի հաղթահարում իր ճիգնությունը և հագիվ հասնում է մարդասպանի մակարդակին: Եվ բանաստեղծը էքզիստենցիալ հիասթափության հաղթահարումը փնտրում է «հեռու մի անկյան» մեջ:

Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երագի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Գեղարվեստական գիտակցման զարգացման բոլոր փուլերում էլ համընդգրկուն և ընդարձակ են թունանյանի մտքի, հոգու և ճանաչողության սահմանները: Նա հաղորդակցվեց համաշխարհային գրականությանն ու փիլիսոփայությանը, հոգեբանությանն ու արվեստին, բայց մնաց եզակի իր աշխարհընկալմամբ, արժեհամակարգով ու մտակարգով՝ նույնիսկ ցավի և տառապանքի մեջ արտացոլելով գոյութենապաշտություն. «...Ծանրանում են մեր աշխարհի ամեն ցավերը, գուցե այդ արդեն ապացույց է, որ ես էլ եմ բանաստեղծ, բայց, ասում եմ, զարմանալու բան է, ես առանց երգելու հոգնած եմ այդ ցավերից ու սիրում եմ բոլորովին ուրիշ ցավեր, ավելի անուշ, ավելի աստվածային, երջանիկ ցավեր: Չգիտեմ այսպե՛ս է, թե՞ ինձ այսպես է թվում. թե կարող ես ջոկիր.- այս ի՞նչ կենտրոնախույս տրամադրություն էր, որ իմ մուսային դարձնում է դավաճան՝ ազգի առջև»- գրել է բանաստեղծը: Սիրել ցավը, այն համարել անուշ ու աստվածային՝ կարող էր միայն բարձրագույն արժեքներին և Արարչին մերձեցողը, արարչական սկիզբը, ընթացքն ու ավարտը իմաստավորողը: Բնության տարբեր տեսարանների ու պատկերների հետ թունանյանի ամուր խոհազգացմունքային կապը ևս փաստում է բնության ազնվության հետ նրա խորքային ինքնամուսկավորման մասին: Նա բնության պես ազնիվ է, մաքուր և բյուրեղյա, և բնությունը՝ որպես հավերժի ստորագություն, դառնում է էքզիստենցիա: Բազմաթիվ են բնությանն ու տիեզերքին մերձեցնելու բանաստեղծի ստեղծագործությունները, որոնք ևս ամբողջացնում են կյանքի էքզիստենցիալ ընկալումը, ինչպես:

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
- Չա՛ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Հանդերձյալ կյանքին, հոգու անմահությանը, ճամփորդ հոգուն առնչվող շեշտադրումները ևս սահմանում են բանաստեղծի կյանքի էքզիստենցիալ ըմբռնման ուղղվածությունը. «Երկու շիրիմ իրար կից, // Հավերժական լուռ դրկից, // Թախծում են պաղ ու խորհում, // Թե՛ ի՛նչ տարան աշխարհից»: Իսկ ճամփորդ հոգին ներըմբռնողական և ենթագիտակցական մղումներով տիեզերքում հարթում է իր ճանապարհը՝ այդ կերպ հաղթահարելով մահվան ողջ սարսափն ու ճնշումը:

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին:

Երկրից անցվոր, երկրի փառքին
անհաղորդ է իմ հոգին,

Չեռացել է ու վերացել մինչ աստղերը
հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն
արդեն խորք է իմ հոգին:

Այսպես՝ հավերժը, տիեզերքը, երկինքը համընդգրկուն մտքի խիզախումներով դառնում են ինքնատիպ դրոշմ թունանյանի ստեղծագործություններին՝ ոչ միայն ընդգծելով արարչագործության խորհուրդը, այլև բանաստեղծի կերպարը դարձնելով բացառիկ ու անըստոյուն:

Լուսինե ՂԱՐԱՄԱՆՅԱՆ
հ. գ. թ., դոցենթ

ԱՐՅԱՆՅԱՆ ԳՈՂԳՈՑԱ

ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐԿՆԵՐԻ ԴՊՈՒՆՔԻ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ Պատում Բ

Մութը խտանում էր, սարսափը՝ ահագնանում: Թևաթափ ու քակոտոր դուրս եկանք տնից՝ մարող ճրագի պես հույսը հավատ դարձրած:

Գյուղամիջում մարդկանց բազմություն էր հավաքվել, որին հերթով ավտորուներում էին տեղավորում երիտասարդ տղամարդիկ: Աղմուկ-աղաղակ չկար, բոլորը ահից սակվել էին: Հուսահատ ու ահաբեկ դեմքերով իրար էին նայում մարդիկ, ու ոչինչ չէին խոսում: Ներսուսն փլվում, փշրվում են վերջին հույսերս, բայց, միևնույն է, ոչինչ չէի գգում...

Այսպես անգզա հոգեվիճակում բարձրանում ենք ավտորուներ ու բռնում անորոշության քողով պատված ճանապարհը:

Հասնում ենք Ստեփանակերտի օդանավակայան, որտեղ տեղակայված են ռուս խաղաղապահների կացարանները: Փոքր երեխաներ ունեցող ընտանիքներին (հիարկե, ոչ բոլորին) ուղեկցում էին վրաններ, որտեղ նրանց սնունդ ու ապաստան էին տալիս: Մարդկային հոսքը դեպի օդանավակայան չէր դադարում: Ներսի հարկաբաժիններում հատակին անգամ ոտք դնելու տեղ չկար: Հատակներին ծածկողներ էին փռված, խունք-խունք ընտանիքներ էին տեղավորված դրանց վրա: Մանուկների աղմուկ-աղաղակի մեջ ոչինչ չէր լսվում, նրանք դեռ անհաղորդ էին իրականությանը, մեկ-մեկ նայում էին իրենց ծնողների հուսահատ դեմքերին ու ոչինչ չէին հասկանում: Ծեր ու հաշմանդամ տեղավորվել էին իրենց պայուսակների վրա: Ոչ ոք հուսադրող ոչինչ չէր կարող ասել այս մարդկանց՝ հոգիները խաղաղեցնելու համար:

Դրսում՝ պատերի տակ ու բակի ծաղկանոցներում ասեղ գցելու տեղ չկար: Խավարի մեջ մարդիկ չէին ճանաչում իրար: Ծանոթ-անծանոթ խառնամբղիք անընդհատ շարժման մեջ էր, ու գիշերը երկարում էր: Արևերի թնդումները չէին դադարում, շատ մոտ էին լսվում: Մթության մեջ շշուկներն էլ ավելի էին թանձրանում: մեկ լսվում՝ մերոնք են, մեկ՝ չէ, մեր դիրքերի վրա են հարվածում...

Երբեմն-երբեմն այս ու այն կողմից ծայրեր էին լսվում, մոտենում էինք, հարցուփոխում անում, բայց ամաչում էինք իրար չափերի մեջ նայել, անընդհատ փախցնում էինք դեմքերից... Ինչ-չո՞ւ՞ չէինք հասկանում: Այո, ամաչում էինք: Հավանաբար նրա համար, որ Արցախյան առաջին պատերազմից ի վեր հայտարարել կամ գնա՞ծ ենք եղել, և ոչ ոք չի կարողացել կտրել մեզ, իսկ հիմա խեղճ ու անճարակների պես դռնեղուն ենք ընկել ու չգիտենք՝ ում ապավինենք: Այն ժամանակ իրավիճակի թեպատրոնը մենք էինք, խաղաղապահների հույսին չէինք, ոչ մեկից էլ կարված չէինք:

Կյանքի ճանապարհը բացել էինք մենք. բացողն էլ էինք մենք, փակողն էլ: Իսկ հիմա այն փակ էր հենց միայն մեզ համար: Ինչպիսի՞ ստորացում: Իսկ ստոր ու անարգ աշխարհը ստորաբար լռում էր ու լռում: Եվ արցախահայերը՝ մեծ ու փոքր, կուչ էին եկել օդանավակայանի պատերի տակ խեղճուկրակի պես: Հիշեցի ահավոր 1915-ը ու շատ ընդհանրություններ տեսա մեր այսօրվա ու այն ժամանակվա Վաղարշապատի պատերի տակ կուչ եկած տառապալ հայ գաղթականների, որբուկների ճակատագրերի միջև:

Աշխարհը ոչնչով չի փոխվել. նույն բար ու անարբեր, նույն խիղճը մենա՞ծ աշխարհն է, որից, սակայն, մենք դասեր չէինք քաղել:

Ահասարակ գիշերը դանդաղում էր, հատակին քնած երեխաները ժամանակ առ ժամանակ արթնանում, մարիկներից ու տատիկներից ուտելու կամ խմելու բան էին պահանջում, իսկ մենք տեղ էլ չունեինք, ո՞ր մնաց, թե որևէ բան պահանջեինք. բայց ու՞մի՞ց...

Հենվել էինք մի սեղանի (գուցե կարճ պահարան էր, այդ էլ չէինք կարող այդ պահին ընթռնել) և ու ձախ էինք նայում: Ողջ գիշեր արագիլի պես մի ոտքի վրա լուսացրինք. ո՞ւմ աչքին քուն կգար այդ իրավիճակում: Իսկ կրակոցները չէին դադարում:

Անընդհատ ուղեղս էր սղոցում այն միտքը, որ ուր որ է դավադիր թշնամին մի արկ էլ կուղղի օդանավակայանի վրա, ու, պատկերացնո՞ւմ եք՝ ինչքան զոհ կլինի: Ու ինչպես միշտ, կարդարանա, որ դիտավորյալն էր արել:

Սիրտս ցավից մրմնում էր, ու չէի կարողանում խաղաղվել: Ապաստումը դարձել էր պահի թեպատրոնը:

Լուսաբացը ոչ մի լավ բան չէր խոստանում տանյակ հագարավոր այս մարդկանց: Մարդիկ սկսեցին ներս ու դուրս անել: Ողջ գիշեր և լուսաբացին գաղթականների հոսքը տարբեր շրջաններից չէր դադարում (մարդ է՛լ սեփական հայրենիքում գաղթական լինի). գալիս-գալիս էին, ու վերջ չկար: Այդ գիշեր մենք տառապանքների ու հոգու տվայտանքների մի ամբողջ դար ապրեցինք, թվում էր՝ այն հավերժ է ուղեկցելու մեզ:

Քիչ հետո Արցախի մայրաքաղաքից սկսվեց շարժը դեպի օդանավակայան: Բենզինի բացակայությանը պայմանավորված՝ մարդիկ գալիս էին ոտքով, ամեն մեկը մի պայուսակ ուսած: Նայում էս նրանց խուճապահար հայացքներին ու ոչնչով չես կարող սփոփել: Ամբողջովին ծակատագրի քնահաճուխին թողնված՝ արցախցին իր հայրենիքում գաղթական էր դարձել ու փրկության հույս էլ չուներ:

Երկրի ոչ մի պաշտոնյա այդ ամբողջ ընթացքում չկանգնեց իր ժողովրդի կողքին, սփոփող խոսք չլսվեց: Լուրեր տարածվեցին այն մասին, թե նորանշանակ նախագահը գալու է ու հանդես է գալու ժողովրդի առջև: Ժամանակը հոսում էր, նախագահի այցն ու խոսքը՝ ուշանում: Այն պարզվեց, որ բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ եկել, հանդիպել են մի խումբ մարդկանց, խոսել նրանց հետ ու հեռացել:

Կյանքը կանգ էր առել, իսկ ոտքը շարունակում էր գնդակոծությունը: Չարենցի խելագարված ամբոխների պես տուն-տեղ թողած արցախցիները մեկ-մեկ մոտենում էին դրսում կանգնած խաղաղապահներին, որոնք մեր «անվտանգությունն էին ապահովում», հարցեր ուղղում նրանց: Սոված-ծարավ շրջում էինք օդանավակայանի շուրջը՝ «անգիտությանը բախտավոր»:

Կեսօրից հետո կրակոցի ծայրերը սակավացան: Համեմատաբար հանգիստ էր: Երեկոյան դեռ հրաման եկավ «վերևից», թե արդեն խաղաղություն է, թշնամին վերադառնում է ելման դիրքեր, բոլորը կարող են գնալ իրենց տները, իսկ Ասկերանի, Խնապատի ու Խրանոթի բնակիչները առաջիկա չեն կարող վերադառնալ՝ անվտանգության նկատառումներից ելնելով. նրանց տեղափոխում են մայրաքաղաքի հյուրանոցներ, իսկ ումբեր հարազատներ ունեն քաղաքում՝ նրանց տները:

Տեղավորվեցինք ավտորուներում ու շարժվեցինք դեպի Արցախի սիրտը, որն այդ պահին ցավագին տրոփում էր խուճապահար իր գավակների համար: Գիշերային սարսափագրու խավարը դավադիր թշնամու պես ուղեկցում էր մեզ: Հասանք Ստեփանակերտ ու մթության մեջ քայլեցինք դեպի որդուս տունը, որը քաղաքի ծայրամասում էր գտնվում: Հեռավոր հորիզոններից դեռ մեկ-մեկ կրակոցներ էին հասնում մեզ: Խավարը չէր խաղաղվում: Գյուղ մեկնելու և առաջին անհրաժեշտության իրեր ու փաստաթղթեր վերցնելու հույսը չէր մարում, խնդիրը վառելիքն էր, որ անհնար էր հայթայթել, մեկ էլ գյուղը վերահսկող թուրքերը...

րը, որոնցից կարելի էր ամեն ինչ սպասել, մանավանդ որ մեր տունն էլ գյուղի ծայրամասում էր: Հաջորդ օրերին ումբեր վառելիք ձեռք բերեցին, նրանց հաջողվեց գյուղ մտնել, որոշ իրեր վերցնել, իսկ մենք սպասում էինք հնարավոր ու հարմար առիթի, որն այդպես էլ, դժբախտաբար, չներկայացավ: Տարիներով պահպանած օրագրերս էլ մնացին հեռվում, որոնց մեջ գրանցում էի մեր լավ ու վատ օրերի իրադարձությունները, կարևոր անցքերը:

Մայրաքաղաքը օրըստօրե լցվում էր գյուղերը լքած գաղթականներով, փողոցներում, բակերում ու հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Հասկանում էինք, որ խուճապահար մարդիկ, որոնք սարսափելի պատմություններ էին ներկայացնում թշնամու վայրագությունների ու բարբարոսությունների մասին, այլևս սիրտ չեն անելու վերադառնալ իրենց բնակության վայրեր, մինչև որ ոտքը չհեռանար մեր գյուղերից ու քաղաքներից:

Հայրենագուրկները տեղավորվել էին հյուրանոցներում. նրանց մասին հոգ էին տանում:

Բլուկաղան շարունակվում էր, մարդիկ հաց ու ռուտելիք չուներին. բոլորը վախից պատսպարվել էին նկուղներում: Կառավարության կողմից մեկ-մեկ օգնություն էր հասնում նկուղներում ապաստանած մարդկանց: Ծեմքերի նկուղներում, մուտքերում, բակերում վառարաններ են հայտնվում, որոնց վրա հաց էին թխում ու ճաշ պատրաստում: Բայց այլուրն էլ էր սպասում... Ի՞նչ էր լինելու այս բազմաչարչար ժողովրդի հետ. ոչ ոք պատասխանատու չէր:

Հետո... Հետո դպրոցներից հրահանգեցին, որ ծնողները գնան իրենց երեխաների փաստաթղթերի հետևից: Ի՞նչ էր կատարվում: Հայտնի դարձավ, որ Շուշիի շրջանի Մեծ Ծեմի, Հին Ծեմի, Եղծախողի բնակիչներին տարհանում են Հայաստան: Փաստորեն բացվել էր կյանքի ճանապարհը, բայց ոչ կյանքի, ոչ ապրելու, այլ փախուստի համար...

Հետո քաղաքի բակերում, փողոցներում ու աղբարկղերի մոտ խարույկներ հայտնվեցին: Լուրեր էին շրջանառվում, որ տարիանվողները «լավ գնվելու են» կյանքի ճանապարհին անցնելու ժամանակ՝ Հակարիի կամուրջը հատելիս:

Կրակի ճարակ դարձան զինվորական համազգեստներ, կոչումը հաստատող փաստաթղթեր, մեղավոր ու շքանշաններ, լուսանկարներ, ամեն ինչ՝ կնապված զինծառայության հետ... սարսափն ու խուճապը պատել էր ժողովրդիս:

Հաջորդող օրերին սկսվեց մայրաքաղաքի դատարկումը: Կյանքի ճանապարհը երախթ բացել, ասես կուլ էր տալիս արցախցիներին: Մարդիկ ծայրահեղ ապրումների մեջ էին վառելիք հայթայթելու համար: Այդ օրերին եղավ սեպտեմբերի 25-ի մեծ ողբերգությունը: Ծանոթ-անծանոթներն իրար հայտնեցին Հայկազուկի բենզակցակայանի մասին, որտեղից կարելի էր վառելիք հայթայթել: Այնտեղ էին ընտանիքի անդամներով՝ ամուսին, կին, երեխա, եղբայր ու քույր, բարեկամներ, հարազատներ: Վերահսկողություն չկար այդ վտանգավոր գործընթացում. ով ինչպես կարող էր, ով որքան կարող էր: Ու արդյունքում՝ մեծ, անդառնալի կորուստներ: Քիչ էր սեպտեմբերյան պատերազմի հետևանքով կորցրածը, ավելացան պայթյունի պատճառով զոհերը: Ամենը մարդիկ այրվեցին ու մոխրացան: Մոխրացան նաև մեր հույսն ու հավատը:

Առջևում գաղթն էր, գաղթը՝ սեփական հողից...

(Հարունակելի) Սուրյայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԺԵՐԱՐԴ ԳԵՐԳԵՐՅԱՆ

ՍԻԶԻՓՈՍԻ ԱՌԱՄՊԵԼԸ՝ ԿԱՐԵՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Ժերարդ Գերգերյանը միջազգային իրավունքի առաջադեմ ուսումնասիրություններ է կատարել Փարիզի Ասասի համալսարանում, Փարիզի Բարդախի հետազոտությունների ինստիտուտում, հոգեբանություն է ուսումնասիրել Փարիզի Դեկարտի համալսարանում: Փարիզի Բարդախի փաստաբան է, զբաղեցրել է դեկավար պաշտոններ մի շարք միջազգային ընկերություններում:



Լույսի եզակիությունը չի մարի:

Սախագիծ իրականացնելու համար շատ բան պետք չէր: Եվ ինչպես ասում էր Ալբերտ Բանյուն՝ «բոլոր մեծ գործողությունները և բոլոր մեծ մտքերը աննշան սկիզբ ունեն»։ Ցավալի է, որ ոմանց չունեն համարձակություն պարտությունից հետո անհրաժեշտ երակացություններ անելու: Իշխանությունից կաշած մնալը՝ ձեր իսկ «ճշմարտությունը» համոզելով, ոչ մի լավ բանի չի հանգեցնում, բացի ունայնություն ցուցաբերելուց:

Gerard Guerguerian

Gerard Guerguerian est diplômé d'Études Approfondies en droit international de L'Université de Paris Assas, de l'institut d'Études Politiques de Paris, et de Psychologie de L'Université de Paris Descartes. Avocat au barreau de Paris, il a également exercé des fonctions dirigeantes au plus haut niveau dans plusieurs sociétés internationales. Il est acteur de la scène arménienne. Plus récemment, il a exercé les fonctions de Directeur Exécutif du Centre de la Francophonie de Stepanakert, « Maison Paul Éluard », dont il a insufflé, avec une équipe dédiée, à la fois le style et l'architecture, et contribué quotidiennement à son succès jusqu'à l'invasion de l'Artsakh.

Le Mythe de Sisyphe

« C'est qu'en vérité, le chemin importe peu, la volonté d'arriver suffit à tout » Il est des situations, dans la vie, qui donnent une impression de « déjà vu ».

Ainsi en est-il de ce peuple d'Artsakh qui se retrouve chassé de sa terre, à qui on consent à donner le statut de « réfugié » dans le pays même dont il pensait avoir la nationalité, dont il pensait faire partie en tant qu'arménien, dont il espérait la solidarité et la fraternité.


« L'absurde » dans toute sa plénitude !

Absurde de voir, à un siècle près, tout un peuple connaître le même sort de ceux de 1915. Les charrettes en moins, les voitures en plus. Nettoyage ethnique. La peur d'être exterminé. Les mots importent peu. C'est un fait ! Évident, que toute une population devra, de nouveau, repartir de zéro, car dans ces situations on s'exile avec peu, on laisse derrière soi, richesse, maison, travail. Qu'il s'agisse des Arméniens du Liban, de France ou de Syrie, ceux là aussi sont arrivés dans le dénuement. Et pourtant ils se sont reconstruits par la force de la volonté. Du déjà vu !

Cela nous fait penser à une lecture de jeunesse, le Mythe de Sisyphe. Sisyphé qui se donne pour mission de pousser le rocher au sommet de la colline, sachant pertinemment qu'il redescendra de lui-même. Et pourtant il persévère. Il s'accroche. Il continue à remonter la pente, sans se poser de questions sur l'absurdité de la situation. Car « l'absurde n'a de sens que dans la mesure où l'on n'y consent pas » (Albert Camus).

On dit que les Artsakhotes sont têtus, obstinés. C'est absolument vrai ! Mais c'est justement pour cette raison que certains d'entre eux ne veulent pas consentir à l'absurde de la situation nouvelle et se donnent les moyens de renaître. Continuer à réparer l'originalité d'une pensée, d'une culture, d'une façon d'être et de « vouloir vivre ». En cela, le Journal « Lusarar » qui renait de ses cendres à Erevan, à peine quelques mois après un exode historique, est représentatif de cette obstination si caractéristique de ce peuple des confins. La singularité de la lumière culturelle qu'il porte ne va donc pas s'éteindre.

Pour mener un projet, il n'en faut pas beaucoup. Et comme l'affirmait Albert Camus, « toutes les grandes actions et toutes les grandes pensées ont un commencement dérisoire ». Il est regrettable que certains dirigeants aient manqué de courage, n'aient pas tiré, par suite de la défaite, les conclusions qui s'imposent, et n'aient pas pris le chemin de « Londres ». A vouloir s'agripper au pouvoir, se persuader de détenir la « vérité » ne présage rien de bon, si ce n'est faire preuve de vanité.



ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅՑ

ԱՎԱՆԱԿՈՐ ԳՐՈՂԸ ՆԱԵՎ ՄԵԾԱՏԱՌՈՎ ՈՒՍՈՒՑԻՉ ԷՐ

Վարդան Հակոբյանի հիշատակին

2023թ. փետրվարի 28-ին խուլ շրջափակման մեջ գտնվող Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում վախճանվեց անվանի գրող և հասարակական գործիչ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հիմնադիր ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության օրհներգի տեքստի հեղինակ Վարդան Հակոբյանը:

Փետրվարի 29-ին Երևանի Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Վարդան Հակոբյանին: Ներկա էին գրողի գրչընկերները, մշակույթի գործիչներ, հյուրեր: Բացելով ցերեկույթը՝ այն վարող Գայանե Սամվելյանը

հակյանի անվան կենտրոնական գրադարանի ու «Լուսարար» կրթամշակութային հասարակական կազմակերպության աջակցությամբ է կազմակերպվել այսօրվա միջոցառումը՝ ի հարգանք տաղանդավոր գրչընկերոջ և գիտամշակութային անխնայ գործիչի հիշատակին:

Ելույթներով հանդես եկան Վ. Հակոբյանի գրչակից ընկերները՝ հուշեր պատմելով նրա մասին: Իր զեկուցման մեջ գրող, բանասիրական գիտությունների թեկնածու, Արցախի լրագրողների միության նախագահ Կիմ Գաբրիելյանը, խոսելով Վ. Հակոբյանի մասին, կարևորեց նրա դերը Արցախի գրական, կրթամշակութային, հասարակական ու քաղաքական կյանքում: Բանաստեղծ հակիրճ ներկայացրեց գրչընկերոջ կենսագրությունը:

Վ ա Ր Ղ Ե Ա Ն (ծննդոց անունը՝ Սլավիկ) Հակոբյանը ծնվել է 1948թ. մայիսի 21-ին Արցախի Հանրապետության Արվազե տուն կոմունայում: Սկզբնական կրթությունն ստացել է հարազատ գյուղի դպրոցում: 1969թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1969-1983թթ. աշխատել է ԼՂ մարզային «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում: 1976-1983թթ. եղել է գլխավոր խմբագրի տեղակալը: 1983-1991թթ. գրողների ԼՂ մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղարն էր, 1991 թվականից՝ ԼՂԳ գրողների միության նախագահը: 1982 թվականից Հայաստանի

գրողների միության անդամ էր: Վարդան գրական ծածկանունը կնքել է Հովհաննես Շիրազը:

Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը, Հայաստանի

Հուշ-ցերեկույթին եղան այլ ելույթներ ևս: Բանաստեղծ, լրագրող, բազմաթիվ երգերի տեքստերի հեղինակ Դավիթ Միքայելյանը, որը 5 տասնամյակ և ավելի աշխատել է Վարդան Հակոբյանի հետ, եղել է ԳՄ քարտուղարը, պատասխանատու այլ պաշտոններում, խմբագրել է «ՊԸԸ Պուլի» երգիծաթերթը, հետաքրքիր հուշեր պատմեց համատեղ գործունեության հետ կապված: Անդրադարձալով Վ. Հակոբյանի գործունեությանը՝ կարևորեց այն հանգամանքը, որ նա մշտապես աջակցել է արցախցի ստեղծագործողներին:

Արձակագիր Համլետ Մարտիրոսյանը (Մարտիրոս Որմեցի) Արցախի գրական ըն-

Արդեն նշվեց, որ Վարդան Հակոբյանը մշտապես կարևորել է երիտասարդ գրողների ու գիտնականների դերը, աջակցել նրանց կայացմանը: Գրականագետ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դոցենտ Ամալյա Գրիգորյանը հուզմունքով ներկայացրեց իր մեծատառով ուսուցչին՝ նշելով, որ վերջինս համալսարանի դասախոսներից շատերին է ոգևորել գիտական աստիճան հայցելու գործընթացում:

Վարդան Հակոբյանի «Կատուն» երգիծապոեմն ու «Մետրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմից հատվածներ արտասանեց Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան, Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը:

Նույն թատրոնի դերասանուհի Ռուզան Գասպարյանն արտասանեց Վ. Հակոբյանի՝ Արցախի բարբառով գրված բանաստեղծությունները:

Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ Սամվել Եվրիյանը, որը նաև ակնավոր գրողի մտերիմներից է, արտասանեց նրա հրաշալի գործերից մեկը՝ «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին»:

Ելույթ ունեցողները հույս հայտնեցին, որ Արցախը նորից կսկսի հայերեն խոսել՝ հնչեցնելով նաև Վարդան Հակոբյանի բանաստեղծական հզոր ձայնը:

Հուշ-ցերեկույթն ավարտվեց Արցախի օրհներգի կատարումով:

Ջոհրաբ ԸՈՒՔՈՅԱՆ



ասաց. «Նշանակալից է Հակոբյանի ավանդը Արցախի և Հայաստանի գրական, կրթագիտական և մշակութային բնագավառներում: Տևական ժամանակ հանդիսանալով Արցախի գրողների միության նախագահը՝ նա կարողացել է ապահովել ստեղծագործական այնպիսի հատուկ միջավայր, որտեղ ձևավորվել ու կայացել են գրողական շնորհալի սերունդներ: Հենց նրանց ներկայացուցիչների նախաձեռնությամբ, ինչպես նաև Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Վարդան Հակոբյանին: Ներկա էին գրողի գրչընկերները, մշակույթի գործիչներ, հյուրեր: Բացելով ցերեկույթը՝ այն վարող Գայանե Սամվելյանը

հակյանի անվան կենտրոնական գրադարանի ու «Լուսարար» կրթամշակութային հասարակական կազմակերպության աջակցությամբ է կազմակերպվել այսօրվա միջոցառումը՝ ի հարգանք տաղանդավոր գրչընկերոջ և գիտամշակութային անխնայ գործիչի հիշատակին:


Սկզբնական կրթությունն ստացել է հարազատ գյուղի դպրոցում: 1969թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1969-1983թթ. աշխատել է ԼՂ մարզային «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում: 1976-1983թթ. եղել է գլխավոր խմբագրի տեղակալը: 1983-1991թթ. գրողների ԼՂ մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղարն էր, 1991 թվականից՝ ԼՂԳ գրողների միության նախագահը: 1982 թվականից Հայաստանի

մի պետական և ժողովրդական թատրոնները բեմադրել են Վարդան Հակոբյանի «Հայելիներ» (1979), «Քո սերը քո տունն է» (1981), «Ես հրաժարվում եմ ինձանից», «Արցախյան բալլադ» պիեսները: Վ. Հակոբյանը հիմնադրել է «Արցախ» (1989), «ՊԸԸ-Պուլի» (1991) հանդեսները, «Եղիցի լույս» գրական թերթը, «Արցախ» գրահրատարակչությունը: Նրա ստեղծագործությունները տպագրվել են ռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, անգլերեն և այլ լեզուներով:

Խոսելով Վ. Հակոբյանի մասին՝ որպես քաղաքական գործիչ, Կ. Գաբրիելյանը հուշեր պատմեց 1988թ. Արցախյան շարժման առաջին օրերի մասին, մասնավորապես, ինչպես է ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի ժամանակ Վ. Հակոբյանը դահլիճից դուրս հրավիրել Ադրբեջանի ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բադիրլին ու նրա հետ եկածներին, որոնք փորձում էին խանգարել նիստը:



տանիքի տաղանդավոր ներկայացուցիչներից է, Գրողների արցախյան միավորման նախագահը: Երկար տարիներ աշխատել է Վ. Հակոբյանի հետ, խմբագրել Արցախի գրողների միության «Եղիցի լույս» պաշտոնաթերթը, որը կարևոր դեր է ունեցել Արցախ աշխարհի մշակութային կյանքում: Վարդան Հակոբյանը նաև գիշերներն էր ստեղծագործում և կապ չունի որ ժամն էր՝ զանգում էր իրեն, կարդում իր նոր գրած բանաստեղծությունը և կարծիք հարցնում:



Վարդան Հակոբյանի «Կատուն» երգիծապոեմն ու «Մետրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմից հատվածներ արտասանեց Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան, Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ Սամվել Եվրիյանը, որը նաև ակնավոր գրողի մտերիմներից է, արտասանեց նրա հրաշալի գործերից մեկը՝ «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին»:

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Այստեղ, այս անլուռ քարերի վրա իմ տնկած ծառը պիտի գորանար, կանաչեր, շրշար... Կանգնել եմ հիմա ծառի փոխարեն ու զույգ ծկներս հողի դեռ սուգած, խոնարհվում եմ քո ներումի առաջ, այն ծառի առաջ, որ իմ ձեռքերով ու քո քարերից պիտի բարձրանար:

Հայաստան: Հայաստան: Հայաստան:

Ես սիրուդ մասին խոսքեր չգիտեմ, պարզապես ձեռքս մեկնում եմ, ահա, ու քո սարերից ծյուները սրբում, որ Աբովյանը Մասիս ելնելիս ճամփան բաց լինի: Պարզապես ձեռքս մեկնում եմ, ահա, ու քո երկնքի պայծառ շոյում: Ու լուռ եմ մնում: Իմ լռությունը հիմն է կարոտի, աղերս՝ քավության, սիրո՛ւ, հավատի՛:

Հայաստան: Հայաստան: Հայաստան:

Մի քար եմ վերցնում ես քո հանդերձ, պատահած քարը,

համբուրում եմ եւ դնում ճակատիս - մորս ձեռքն է: Եվ հավիտենից հավիտյան օրհնված, եւ քո հաղթությամբ հաղթած ու հզոր, ես ուր էլ գնում՝ հպարտ եմ գնում, չէ՞ որ քո ձեռքն է դիպել ճակատիս, չէ՞ որ ճակատիս քո գիրն եմ կրում:

Հայաստան: Հայաստան: Հայաստան:

ԻՄ ԵՐԳԸ

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին: Ղարաբաղը ծառ է իմ արմատի վրա, Ղարաբաղը սեր է իմ հավատի վրա, Ղարաբաղը տեր է իմ կարոտի վրա, Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին... Ղարաբաղը հեք է բացվող արշալույսի, Ղարաբաղը ձեռք է Քիրսից ձգված լուսին, Ղարաբաղը հերկ է մաքուր, անբիծ լույսի, Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին, Ղարաբաղը ջուր է՝ ես եմ քամել քարից, Ղարաբաղը թուր է՝ ես եմ կոփել դարից, Ղարաբաղը հուր է՝ ճառագած մեր սրտերից, Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին, Ղարաբաղը հուն է հոսող լուսաբացի,

Ղարաբաղը բույն է արծվի, ձեռք չի հասնի, Ղարաբաղը տուն է՝ սերված Ամարասից, Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին, Ղարաբաղը ելք է՝ բացված սրտի նման, Ղարաբաղը երգ է, բառեր չունի սակայն, Իմ պապերի ծայրով միայն երգեցեք այն, Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

ԱՆՄԱՐԵԼԻ-ԱՆՄԵՌՆԵԼԻ

Կանգնել ահա Ու նայում եմ մեր օջախին. Օջախի մեջ պապիս պապի նախապապի Ձեռքով վառած կրակն է հին, Անթեղվելով, Հուրը հրին տալով եկել, հասել է ինձ, Կրակը հին: Եվ պողերը իրար բերում մոխիրներում, Շաղախում իր տաք շնչի հետ, Նոր կրակ է մայրս վառում: Ու կրակի պողերը թե՛ Մատներն իմ մոր չեն էլ այրում, Ու կրակի պողերը թե՛ Համբուրում եմ մատներն իմ մոր: Թե՛ ծանում է կրակն իսկույն, Բոցերն աշխույժ պար են բռնում, Մորս հոգու ջերմությունը Նկարելով մեր տան պատին, Ուր պատկերն է Իմ մեծ պապի:

Հետո գալիս փայլը նրանց թրթռում է դեմքիս վրա: Ես գարթնում եմ, տեսնում տունը, Առավոտը, Եվ երկինքը, լեռներն ամեն Կրակից այդ ջերմություն ու փայլ են առել: Մինչև մայրս կրակ չանի, Արեւն էլ չէ Իր անկողնուց փորձում ելնել: Եվ քարերը մեր օջախի Շիկանում են, Շիկանքից այդ ավելի են շքեղանում Կանչերը մեր բազմաթիւր. - Մայր, ինչի՞ց է, որ վառվում եմ Քարերն այսքան, Բայց հրաշքով չեն փշրվում: - Կրակով է քարը դարձել օջախի քար, Կրակն ինչքան բորբոք պահես, Դե, այնքան լավ, Բայց թե հանկարծ արթուն չեղար, հուրը հանգավ, Նա ճաք կտա հարյուր տեղից, Կփշրվի, Պատի ճաքը կանցնի անգամ Քո մեծ պապի պահած հողին: Կանգնել ահա ու նայում եմ մեր օջախին Օջախի մեջ պար է բռնել Պապիս պապի նախապապի Ձեռքով վառած, անմարելի, Անմեռնելի կրակը հին:

ՇՊԵՎԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

ԶՈՒՄԲԱՆ ԿԱՐՈՂ Է ՆՐԱՇՔՆԵՐ ԳՈՐԾԵԼ ՄԵՐ ՆՈԳԵԿԱՆՈՒՄ



2023թ. սեպտեմբերի 19-ից հետո արցախահայերիս կյանքը բաժանվեց երկու մասի. ապրել ու արարել հայրենիքում՝ հարթահարելով անմարդկային դժվարությունները, եւ հայրենիքը կորցնելուց հետո դեզերումների ու հիասթափությունների մեջ գոյություն պահելու միջոցներ ստեղծել:

Յերթական գրույցն ունեցանք BASIC-1 (հիմնական բազա) զույմբայի ու ֆիթնեսի մարզիչ Լուսիա ՄԱՅԱԿԱՆՅԱՆԻ հետ, որն անգամ շրջափակման ծանր պայմաններում շարունակում էր Ստեփանակերտում մարզել կանանց ու աղջիկների, ինչպես նաև, սիրապետելով դիտողագիտի եւ սննդաբանության հմտություններին, կատարում էր խորհրդատվություն, իսկ մեր ընթերցողների համար սիրով կիսվում էր օգտակար խորհուրդներով, թե ինչպես կարելի է ստեղծված պայմաններում խուսափել թերսնունդից: Լուսիա Մայակայանյանը բռնի տեղահանվելուց հետո չդադարեց մարզումները, չնայած նրան, որ նոր միջավայրը նոր դժվարություններ էր բերում:

- Լուսիա՛, շրջափակման հետևանքով առաջացած դժվարությունները չէին շրջանցում ոչ մի ոլորտ: Մարզվող մարդկանց եւ մարզիչների համար եւս առաջացել էին բազմաթիվ խնդիրներ, որոնց մասին խոսվել է բազմիցս, այնուամենայնիվ, որո՞նք էին դժվարագույն խնդիրները:

- Չնայած դժվարություններին՝ շրջափակման պայմաններում շարունակում էինք զույմբա-ֆիթնեսի մարզումները: Դա անհրաժեշտ ու կարևոր էր ոչ միայն աղջիկների համար, որոնք հաճախում էին մարզումներին, այլև ինձ համար: Մարզվելն առաջին հերթին կարգապահություն է, որն օգնում է անորոշ ու դժվար կացության մեջ հայտնված մարդուն: Երկրորդ՝ մարզումները, առավել եւս զույմբան, լավագույն միջոց են սթրեսներից ազատվելու, ընկճախտին չտրվելու համար: Օրվա ընթացքում մեր ապրած բացասական հույզերը հեշտությամբ կարելի է դուրս հանել մարզումների շնորհիվ՝ թողնելով բացասական մարզադաշտի խոնավ: Դա օգնում էր լիքը բաժանել, կտրվել բացասական հույզեր առաջացնող հանգամանքներից, որոնց մեջ հայտնվել էինք: Բազմաթիվ դժվարություններ կային, որոնք այս կամ այն կերպ հարթահարում էինք: Առաջինը էլեկտրաէներգիայի անջատումներն էին, ինչի պատճառով ստիպված էի լրացուցիչ կուտակիչներ ձեռք բերել՝ մշտական որակյալ երաժշտություն մարզադաշտի խոնավ ապահովելու համար: Ինչպես գիտեք, երաժշտությունը զույմբայի մարզումների կարևոր բաղադրիչն է: Ինձ մի կերպ հաջողվեց գտնել համապատասխան կուտակիչներ: Մարզիչների հաճախելիությունը մկազել էր՝ պայմանավորված տրանսպորտի բացակայությամբ, սոցիալ-կենցաղային մի շարք խնդիրներով: Մարզիչներից շատերը գալիս էին մայրաքաղաքի ծայրամասերից կամ տարբեր տեղերից: Չանգում էին ու հայտնում, որ շատ են ուզում ներկայանալ պարապմունքի, բայց դժվարանում են

ուղղվ գալ, քանի որ օրվա մեջ ստիպված են եղել ուղեգրվել գնալ աշխատանքի ու գալ, կանգնել հերթերում ու արդեն ուժ չունեն պարապմունքի վայր հասնելու համար:

- Չի՞շո՞ւմ եք Ստեփանակերտում անցկացրած վերջին պարապմունքը: Կարո՞ղ եք պատմել դրա մասին:

- Չի՞շո՞ւմ եմ, ասես երեկ լիներ: Սեպտեմբերի 18-ի երեկոյան էր մեր վերջին պարապմունքը: Քիչ մարզիկներ էին ներկայացել, բայց սկսեցինք: Մեր մարզիկների մեջ կային աղջիկներ, որոնք ծառայում էին անվտանգության համակարգում: Պարապմունքը դեռ չավարտած՝ նրանք զանգեր ստացան, որից հետո ստիպված եղանք դադարեցնել մարզումները: Իհարկե, հասկանում էինք, որ եթե նրանց հրատապ կանչել են, ուրեմն վտանգ կա (թեև արդեն ընտելացել էինք տագնապային կյանքին): Անվտանգության համակարգի մարզիկների գնալուց հետո անհմար էր մարզումները շարունակել, աղջիկների մեջ տագնապ կար. մեկի ամուսինն էր սահմանին, մեկի՝ եղբայրը, մյուսի՝ ընկերը, մենք՝ արցախցիներս, հոգով և մտքով սահմանապահ էինք: Նրանց գնալուց հետո մյուս մարզիկներին փորձեցի քաջալերել, որ դա նրանց աշխատանքն է, մնա՞նք զանգեր հաճախ են լինում, եկեք շարունակենք զույմբան, բայց չստացվեց: Չի՞շո՞ւմ եմ, աշակերտներից ոմանք մույնիսկ կատակեցին, որ Լուսիան այդպիսին է, եթե մույնիսկ կոչվել սկսված լինի, կասի՝ մնացե՛ք, այս մի շարժումն էլ անենք, հետո գնանք... Սառած մնացել էինք մեր տեղերում: Թեև փորձում էի հանգստացնել, բայց ինքս վատ զգացողություն ունեի: Այդպես էլ հրաժեշտ տվեցինք միմյանց՝ յուրաքանչյուրս հույս խորքում հասկանալով, բայց չբարձրաձայնելով, որ հնարավոր է, որ դա մեր վերջին մարզումն է:

- Սեպտեմբերի 19-ին...
- Սարսափելի էր: Ավագ որդին, որը սովորում էր Շուշիի տեխնոլոգիական քոլեջում, առավոտյան ասաց, որ չի ուզում գնալ դասի, քանի որ ինչ-որ պատճառով քիչ դաս պետք է անեն: Չհակաճանեցի: Բայց փոքր որդուս դպրոց ուղարկեցի՝ մտածելով, որ 7-րդ դպրոցն այնքան էլ հեռու չէ: Ամուսինս ծառայության էր, նոր էր մտել զինվորական ծառայության: Երբ սկսվեց պատերազմը, վազեցի քոջուս մոտ, որպեսզի միասին գնայինք դպրոց՝ երեխաների հետեւից: Չասանք դպրոց, չէինք գտնում երեխաներին. ամենուր խուճապ էր, գոռոցներ, լաց, բոլորն իրար էին խառնվել: Քույրս չէինք գտնում եւ ուշագնաց եղավ: Ապրումներս անկարգրեցի ինձ: Ուշ-քի բերեցինք նրան, սթափվելով՝ երեխաներին փնտրեցինք, նրանց գտանք նկուղում: Երբեք չեմ մոռանա այդ սահմնելեցուցիչ տեսարանը՝ խուճապի մատնված երեխաներին: Մի կողմից ամուսնուս մասին էի մտածում, հետո իմացա, որ իրենց գտնվելու վայրին էլ են խփել, վիրավորներ էր հանում: Մյուս կողմից՝ քաղաքի վրա չդադարող արկերի պայթյունների ծայրերը, խուճապահար մարդկանց սարսափահար պատմությունները, անընդհատ հասնող բռնությունը, չզիտեցինք՝ ինչ անել: Իսկ ավելի սարսափելի էր հետո էր, երբ հասկացանք, որ պետք է դուրս գանք Արցախից: Սեպտեմբերի 25-ին դուրս եկանք բարեկամների հետ մի քանի ընտանիքներով միասին:

բացատրում էին, որ այստեղ ես ճանաչված մարզիչ չեմ, զովագրի խնդիր կա, պետք է շատ հաճախորդներ ունենալ եւ այլն: Ի վերջո, ընդունվեցի «DDD» կանանց ֆիթնեսի կենտրոն՝ որպես զույմբայի մարզիչ: Աշխատում եմ տեղի կանանց ու աղջիկների հետ, Արցախի իմ աշակերտուհիներին դեռ սպասում եմ, շատ են կարոտում նրանց: Չի՞շո՞ւմ եմ, որ սկզբնական շրջանում մեր աղջիկները փակ էին, ազատ չէին իրենց շարժումների ու էնոցիաների արտահայտման մեջ, բայց արագ ստացվեց փոխել դա: Այստեղ աշակերտուհիներս ավելի ազատ են ու անկաշկանդ, բայց ոգեւորությունը մարզումների ժամանակ մի քիչ պակասում է: Կարոտում եմ այնքան դժվարություններ հարթահարելով պարապմունքի եկած անճանակազմին ու մեր մարզումներն Արցախում:

- Այն, ինչ ապրել է արցախցին, ծանր է ու դժվար հարթահարելի: Չավանաբար շատերի մոտ անխուսափելի են սթրեսային խանգարումներն ու այլ առողջական խնդիրներ: Մարդկային ու նյութական կորստի համապատկերին ավելի շատ տուժել է արցախցու հոգին: Զույմբան ի՞նչ դեր ունի հոգին վերականգնելու հարցում:

- Զույմբան օգնում է դուրս հանել բացասական հույզերը, փոխարենը ստանալ դրական լիցքեր: Երգն ու պարը միասին չեն կարող չփոխել տրամադրությունը դեպի լավը, որքան էլ դա դժվար լինի: Միջավայրը, որտեղ մարզվում են համախոհներ, եւս դրական է ազդում յուրաքանչյուր մարզիկի վրա, քանի որ մարզվելու ընթացքում կատարվում է էներգիաների փոխանակում ոչ միայն մարզչի ու մարզվողի, այլև մարզիկների միջև: Իմ անճանակազմի օրինակով եմ ասում, որ զույմբան կարող է հրաշքներ գործել մարդու հոգեկանում: Չենք զույմբան դարձնում այն գործիքը, որի միջոցով կարողացա վերականգնել ներքին աշխարհս այնքան սթրեսներից հետո: Ուստի խորհուրդ եմ տալիս հաճախել զույմբայի մարզումների հատկապես նրանց, ովքեր դժվարությամբ են հարթահարում սթրեսները: Երբեմն ինձ հարցնում են՝ արդյոք, հիմա դրա ժամանակն է, եւ մի՞թե դա է պետք հիմա: Իսկ ես պատասխանում եմ՝ հավատացե՛ք՝ այո: Ոչ մեկս մեղավոր չեմք, որ հայտնվել ենք այս իրավիճակում, որը հարթահարելու եւ որից ելք գտնելու համար առաջին հերթին պետք է գոյատևել, պետք է ապրել, իսկ դրա համար անհրաժեշտ է ֆիզիկապես եւ հոգեպես առողջ լինել: Երբ փորձում եմ նոր մարզիկներ ընդգրկել մեր խումբ, այնքան նպատակ չունեն զույմբա վաստակելու, որքան ուզում եմ օգնել ձեզ՝ գիտակցելով, որ զույմբան անհրաժեշտ է ձեզ: Իսկ իմ նախկին աշակերտուհիներին կցանկանայի կրկին տեսնել մարզադաշտի խոնավ: Փորձե՛ք կրկնել մեր համատեղ մարզումները՝ ամեն անգամ մի կտոր վերնուշ ապրելով Արցախում ունեցած մեր հաճելի ժամանցից:

- Բռնի տեղահանվելուց հետո ցանկացե՛լ եք զբաղվել մարզական գործունեությամբ:

- Ցանկությունը միշտ էլ կա, բայց հնարավորությունը եւ պայմանները միշտ չէ, որ համապատասխանում են: Երբ Չակարից անցնելուց հետո հասանք Գորիս, ինքնազգացողությունս վատացավ: Դեռ չէի կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում, ժամանակ էր պետք, որպեսզի կարողանայի մարտել իրավիճակը: Գորիսից մեզ ուղղորդեցին Գյումրի: Բարեկամ ընտանիքներով տեղափոխվեցինք Գյումրի, որտեղ աստիճանաբար ինձ հավաքեցի, ինքնազգացողությունս արդեն նորմալ էր: Չակարից, որ պետք է գործել, քայլեր ձեռնարկել. այդպես ավելի հեշտ կհարթահարվեմ սթրեսային վիճակները: Դիմեցի Գյումրիում ինձ հայտնի ֆիթնեսի ստուդիաներ, սակայն զույմբայի մարզչի տեղ չունեին: Աշակերտներիս հետ անընդհատ կապի մեջ էի: Չակարից, որ նրանցից շատերը տեղավորվել են երեւանում, եւ նրանց ասելով՝ կշարունակեն պարապմունքները, եթե դա լինի այնտեղ: Ստաժեցի, որ երեւանում միզուցե ավելի շատ լինեն հնարավորությունները որպես մարզիչ դրսևորվելու համար, բայց մինչ դա կդառնար, ինձ պետք էր որեւէ աշխատանք: Երկու շաբաթ Գյումրիում մնալուց հետո տեղափոխվեցի Երեւան, որտեղ աշխատանքի մտա «Ռուսակլմենալ» այլումինի գործարանում՝ որպես մատակարարման բաժնի գնորդ: Զույմբան փնտրում էի զույմբայի մարզումները շարունակելու տեղ, բայց հիմնականում ինձ

Սոնյա ԱԿԱԳՅԱՆ

ԱՐՑԱՒԵՅՈՒ ՆՈԳՈՒ ԿԱՆՉՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՐԹԵՐՈՎ



Ալբերտ Գեորգյանն Արցախից բռնի տեղահանված հազարավոր

երեխաներից մեկն է, որը նույնպես հաճախում էր դպրոց, զբաղվում էր մարտարվեստով, զբոսնում էր հայրենի Ստեփանակերտի հարազատ վայրերում եւ պարզապես հպարտ էր, որ արցախցի է: Նա էլ շատերի նման ուներ երազանքներ ու նպատակներ, որոնք կապված էին Արցախի հետ:

Ծնվել է 2017թ. հուլիսի 7-ին Ստեփանակերտում: 44-օրյա պատերազմի ժամանակ մոր հետ տեղափոխվել է Չայաստան, ժամանակավոր բնակություն հաստատել Չրազդան քաղաքում: Պատերազմն ավարտվելուց հետո ծնողների անխախտ որոշմամբ միասին վերադարձել են Ստեփանակերտ՝ Արցախը հայկական պահելու, տարած-

քային ամբողջականությունը վերականգնելու մտադրությամբ ու հույսով: Ալբերտը յուրահատուկ երեխա է թե՛ տարբերվող արտաքին եւ թե՛ շփման կուլտուրա ու խելացի մտքեր ունենալու շնորհիվ: Դժվար թե որեւէ մեկն անտարբեր կարողանար նրա մոտով անցնել առանց արտահայտվելու, թե որքան հմայիչ երեխա է նա: Մանկապարտեզում ու դպրոցում լավ էր իրեն դրսևորում, իսկ ավելի մեծ սիրով հաճախում էր մարտարվեստի պարապմունքների: Վեց տարեկան դեռ չկար, երբ մայրը տարավ նրան մարզադաշտի խոնավ, որտեղ նա ծանոթացավ արեւելյան մարտարվեստներին: Մի օր էլ կա-

լավ մարզվելու համար:

Շրջափակմամբ պայմանավորված՝ սպառվում էր սնունդը: Դժվար էր ծնողների համար իրենց երեխաների կարիքները հոգալ, դպրոց կամ մարզադաշտի խոնավ ուղարկել: Փոքրիկ աճող օրգանիզմին անհրաժեշտ էր վիտամիններով հարուստ սնունդ, որպեսզի կարողանար հեշտ վերականգնվել էներգատար մարզումներից հետո: Դժվար էր, բայց ծնողներն աշխատում էին, որ Ալբերտը չզգա պակասը՝ խնայելով իրենց բաժինը նրա համար:

Ալբերտը կարող էր լավ պարապել ու մասնակցել տարբեր մրցաշարերի՝ ներկայացնելով Արցախը: Սակայն չհասցրեց:

ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ - ԲԱՆԱՐԱՎԱՐ



Սվազյանի կենսագրականն ու գործունեությունը: Ծնվել է 1934 թվականի մարտի 1-ին Եգիպտոսում: 1947-ին Սվազյանների ընտանիքը հայրենադարձվում է Մայր Հայաստան: 1956 թվականին Վերժինե Սվազյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական բաժինը: Ստեղծագործական կյանքի ընթացքում Վ. Սվազյանը հեղինակել է 500-ից ավելի գիտական և հրատարակչական հոդվածներ, շուրջ 30 գիրք, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում և Ափյուռքում: Վ. Սվազյանը հատկապես հայտնի է Հայոց ցեղասպանությունը վերաբերող ակնմատենների բանավոր պատմությունները գրանցելու և հրատարակելու իր անխնայ գործունեությամբ: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա աշխատությունները թարգմանվել են հրատարակվել են իսպաներեն, հինգի, չեխերեն և այլ լեզուներով: 1958-1961թթ. ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի գիտական ղեկավարմամբ ուսումը շարունակել է ԳԱ սասփրանտուրայում «Հայ ժողովրդական բանասիրություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնա-

ռության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու: 1996-2004թթ. եղել է ՀՀ ԳԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, իսկ 1996-2018թթ.՝ ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում գործող մասնագիտական խորհուրդների անդամ: Սկսած 1955 թվականից, ավելի քան 65 տարիների ընթացքում անձնական նախաձեռնությամբ գրառել, ծայնագրել, տեսագրել, ուսումնասիրել և հրատարակել է Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի ավելի քան 150 հայաբնակ բնակավայրերից տեղահանվածների բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության նշխարները: Առավել կարևորել է նրանց կողմից արված փաստավավերական վկայություններն ու պատմական երգերը՝ հայերեն և թուրքալեզու: Դրանք հետագայում արդեն գրքի ձևով հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ներկայացրել է համայն մարդկության դատին:

Բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենական և արտասահմանյան ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդրելու համար ՀՀ նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշամեդալի» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013): 2016 թվականին գիտության և կրթության բնագավառում ունեցած վաստակի

համար շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Յերեկույթին եղան ելույթներ տարբեր մտավորականների կողմից, որոնք ժամանակին աշխատել են, համագործակցել Վերժինե Սվազյանի հետ: Բոլորն էլ սիրով արտահայտվեցին իսկական հայի, գիտնականի, լավ մարդու մասին: Ներկայացրին նրա հրաշալի կերպարը, աշխատասիրությունը, հզոր կամքն ու ձգտումը, որի շնորհիվ կարողացել է մեծ գործ կատարել: Նշվեց նաև, որ 2000թ. վեց լեզվով, այդ թվում՝ թուրքերեն, հրատարակվել է «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» ծավալուն աշխատությունը: Դրա համար հեղինակը վաճառել էր հարսանեկան մատուցող-ուկեղենը, հայրական թանկարժեք նվիրատվությունները՝ գորգեր, այլ պարագաներ:

2020-ին լույս է տեսել նաև «Հայոց ցեղասպանություն. ակնմատեն ապրողների վկայություններ» գիրքը, որում 600 վկայություններ են, երգեր, գրույցներ:

Վ. Սվազյանը, հայտնելով շնորհակալություն, իր հասած հաջողությունները համարեց համատեղ աշխատանքի արդյունք: Սակայն կարևորեց հոր դերը: Հայրը՝ արծալագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ, ծաղրանկարիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1947) Գառնիկ Սվազյանը, վախճանվել է 44 տարեկան հասակում, սակայն հասցրել է դստերը դաստիարակել հայրենիքի իսկական գավակ: «Մեծ է հորս դերակատարումն իմ հոգեգիտակցական աշ-

խարհի ձևավորման գործում: Տակավից մանուկ հասակից ես միշտ ներկա եմ եղել, մասնակցել եմ նրա կազմակերպած բոլոր միջոցառումներին, հասարակական-քաղաքական ձեռնարկումներին, ինչպես՝ Մայր Հայրենիքում Հովհաննես Թումանյանի հիմնադրած Հայաստանի օգնության կոմիտեին աջակցելը. հայրս ՀՕԿ-ի մասնաճյուղի նախագահն էր Ալեքսանդրիայում: Նա դրամահավաքներ էր կազմակերպում և ուղարկում հայրենիք՝ նպաստելով երկրի վերաշինությանը: Նույնիսկ Լեհիստանի տեքստիլ տրիկոտաժի ֆաբրիկայի առաջին ծագողական աշխատանքային հայրս է ուղարկել Եգիպտոսից», - ասաց Վ. Սվազյանը:

Յերեկույթի ավարտին Վ. Սվազյանն իր հեղինակած «Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովություն» խորագրով գիրքը (904 էջ), որը բացվում է «Հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում» քարտեզով, մակագրեց և նվիրեց ներկաներին: Այս գիրքը 40 տարիների ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Վ. Սվազյանը 1979, 1990, 2001, 2004, 2008 թթ. այցելել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եղել է տարբեր քաղաքներում, հանդիպել ամենատարբեր զբաղմունքի ու տարիքի հայերի հետ, հավաքել ամերիկահայերի բանավոր ստեղծագործության հյուսվածքները՝ դրանք առաջինը դարձնելով հայ ժողովրդի սեփականությունն ու ավանդ սերունդներին: Դրանք նաև հարված են ամառադարությանը:

Ջոհրաբ ԸՈՒՅՈՒՍ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՆԴՈՒՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Փետրվարի 19-ը՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, որը նաև Գիրք նվիրելու օրն է, մեծ շուքով նշվում էր նաև Արցախում: Այս տարի արցախցիները ևս օրը նշեցին, բռնի տեղահանվել է: Սակայն պետք է համախուսե՞ր պահել արցախցիներին, որ պահպանվեն արցախյան սովորույթները, ավանդույթները, վերջապես՝ ՏՈՒՄ վերադառնալու նվիրական ձգտումը:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնարար գիտական գրադարանի (ՀԳԳ) և Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի նախաձեռնությամբ ու Արցախի Քաշաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի նախկին վարիչ Վարդուշ Մովսիսյանի կազմակերպմամբ՝ փետրվարի 19-ին կայացավ արցախցի երեխաների հյուրընկալությունը նշված մշակութային օջախներ: ՀՀ ԳԱԱ ՀԳԳ հանրային կապերի պատասխանատու Անուշ Մակարյանը դիմավորեց արցախցիներին՝ Քաշաթաղի և Մարտակերտի շրջաններից և ուղեկցեց գրադարան: Տնօրեն Մայա Գրիգորյանը ներկայացրեց գրադարանի պատմությունը, անդրադարձավ Հովհաննես Թումանյանի գրական գործունեությանը: Հետաքրքրվեց՝ ով որ բնակավայրից է, որ դասարանում է սովորում: Այնուհետև սկսվեց գիրք նվիրելու արարողությունը: Յուրաքանչյուր երեխա, նրանց ուղեկցողները գրադարանի կողմից ստացան գրքեր, հիմնականում՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններ՝ հեքիաթներ, պատմվածքներ, հուշապատմություններ և այլն: Երեխա-

ները համոզեց եկան ասումներով, այնուհետև փոքրիկ շրջագայություն կատարեցին գրադարանի գրապահոցում՝ գիտական քարտուղար Նելլի Հայրապետյանի ուղեկցությամբ: Վերջինս որոշ ժամանակ բնակվել է Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում և սիրով ու հուզմունքով դիմավորեց մեզ: Գրապահոցի աշխատակիցները նշեցին, որ այստեղ պահպանվում է մոտ 4 միլիոն կտոր գրականություն, և գրադարանի այցելուներին կ ո ղ մ ի ց պատվիրված ցանկացած գիրք կարծ ժամկետում կտրամադրվի: Գեղեցիկ ու հետաքրքիր շրջագայություն էր միլիոնավոր գրքերի տարածքում:

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ պրոֆեսոր Հ. Կարապետյանի անվան երկրաբանության թանգարան այդ նույն պես հաճելի պահեր նվիրեց թե՛ երեխաներին, թե՛ նրանց ուղեկցողներին: Թանգարանի տնօրեն Գայանե Գրիգորյանը ներկայացրեց բացառիկ նշանակություն ունեցող մշակութային կառույցի պատմությունը: Թանգարանը հիմնադրվել է 1937թ. ակնավոր երկրաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Հ. Կարապետյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ: Թանգարանի առաջին ցուցադրումը կազմակերպվել է նրա հարուստ հավաքածուի հիման վրա և հետագայում համարվել հիմնական-

ուն Հայաստանի երկրաբանների ցուցանմուշներով: Հ. Կարապետյանի մահից հետո (1943թ.) թանգարանին 1944թ. շնորհվեց նրա անունը: Թանգարանի 11000 նմուշներից ցուցադրական ֆոնդը կազմում է շուրջ 2700 նմուշ, որոնք բաշխված են 6 բաժիններում՝ Հնէաբանության, Հրաբխականության, Հանքաբանության, Օգտակար հանածոների, Ապա-



րաբանության և Հանքային ջրերի: Ներկայացրեց նաև ցուցանմուշները՝ տարբեր տեսակի ապարներ, մետաղներ, երկնաքարեր և այլն: Երեխաների համար առավել հետաքրքիր էր ցուցադրված, որտեղ ներկայացված է սև կապույտ կմախք: Ցուցադրահի պատասխանատուն հանգամանակից ներկայացրեց այն:

Թանգարանի ամենամեծ ցուցանմուշը Տրոգոնթերյան փղի կմախքն է, որը համարվում է երկրաբանական թանգարանի գարդը: Նրա երկարությունը 4,5 մետր է, իսկ բարձրությունը՝ 3,5մ: Կենդանական աշխարհի այս սկսկան ապրել է մոտավորապես 1000000 տարի առաջ Շիրակի հարթավայ-

րում: Նրա կմախքը հայտնաբերվել է Գյումրի քաղաքի հյուսիսարևմտյան ժայռամասում գտնվող «Կազաչի պոստ» ավազահանքի տեղանսահից՝ ավազահանքերի շահագործման աշխատանքների ընթացքում: Այցելուները ծանոթացան նաև Հայաստանում առկա քարերի նմուշներին, հարցեր ուղեցին աշխատակցին, պատասխանեցին նրա հարցերին: Այստեղ է աշխատում նաև Արցախի պետական համալսարանի աշխարհագրության ամբիոնի դասախոս Յուրա Առաքելյանը, որը գրուցեց հայրենակից աշակերտների հետ: Հանդիպեցինք նաև Արցախի Քաշաթաղի շրջանի Տիգրանյան Գյուղի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ Լուսին Հարությունյանին, որն արդեն ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում է աշխատում: Հուզվել էր Լուսինը՝ պատահաբար հանդիպելով քաշաթաղցիներին:

Թանգարանում եղավ նաև ֆիլմի ցուցադրություն փղերի մասին: Պարզվեց, որ այս կենդանին ընդունակ է ուրախացնելու մարդկանց, նկատել և այլ գործողություններ կատարել: Այստեղ և այցելուները գրքեր ստացան նվեր՝ շնորհակալություն հայտնելով հետաքրքիր ու հրաշալի պահեր ունենալու համար:

Այցից հետո գրուցեց երեխաների հետ: Գոհ էին ու ցանկություն հայտնեցին այլ թանգարաններ և այցելել, իհարկե, կարողով Արցախյան իրենց դպրոցն ու տունը հիշելով:

Ջ. ԸՈՒՅՈՒՍ

ԱՐՑԱՄՅՈՒ ՏՈՒՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՉՈՒՆ ԵՐԵՒԱՅԻ ՇՈՒՐԹԵՐՈՎ

2023 թվականի սեպտեմբերին 6-ը նա էլ ստիպված եղավ ընտանիքով հեռանալ Արցախից: Բռնի տեղահանության երկար ու հոգեցնող ժամերն Ալբերտը հաղթահարեց, բայց չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ հնարավոր է այլևս չկարողանա վերադառնալ իր տունը, իր քաղաքը: Ներկայում բնակվում է Արմյան քաղաքում, հաճախում է տեղի դպրոցներից մեկը: Գուցե ես պատահական չե՞մ, որ մարզիչ Տիգրան Գեղորգյանն էլ է ապրում նույն քաղաքում եւ նրան արդեն հաջողվել է ավանդական կարատե դոյո խմբակ բացել նոր ձեռք բերված մարզադահլիճում: Մինչդեռ Ալբերտը դեռ չի հաճախում մարզումների: Մայրը՝ Հայկանուշ Բաղդասարյանը, ասում է. «Զնայած նրան, որ Ալբերտի սիրելի մարզիչը Արմյանում է եւ հուրախություն մեզ՝ մարզումներ է անցկացնում, այնուամենայնիվ դեռ չենք կարողացել պարապմունքները շարունակել: Ես ու ամուսինս աշխատանքի ենք մտել, ժամանակի առումով չենք հասցնում երեխային տանել մարզումների: Բայց ձգտում ենք առաջիկայում կազմակերպել այնպես, որ Ալբերտը կարողանա մասնակցել իր սիրելի կարատեի մարզումներին»:

Իսկ Ալբերտն իր հերթին իր մտորումներն է բարձրաձայնում, որը, թերեւս, բոլորիս հոգու կանչն է. «Ես ուժեղ եմ, պետք է ամենաուժեղը լինեմ, որպեսզի զման թուրքին ծեծեմ, վրձնեմ մեր տնից, Արցախը հետ վերցնեմ»:

Ս. ԱԿԱԳՅԱՆ

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ԲԱՅԱՆԱՅՏՈՒՄՆԵՐՈՎ՝ ՔԱՍԱԽԻ ԿԻՐՃՈՒՄ

Անցնում ենք Քասախի կիրճով: Երկու կողմում ժայռեր են: Ինչպես թունանյանն է նկարագրել Լուռու ծորը, այստեղ ևս համդիպակց ժայռերը շատ խոր են ընկղմված մայր հողի մեջ ու անթարք հայացքով իրար են մայուն: Ավելի քան 90 կմ երկարությամբ Քասախ գետն անցնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերով: Գետի կիրճն ունի մոտ 100 մետր խորություն և լի է առեղծվածային քարանձավներով: Ուղղաձիգ ժայռերը երբեմն 50մ բարձրություն ունեն, իսկ վերևում արծիվներ են ճախրում: Եվ բնակերտ այս հիասքանչ տեսարաններն առավել գեղող են դառնում ու սուրբ են, որովհետև մեր պատերն այս ժայռերի մեջ Աստուծո տունն են կերտել վաղնջական ժամանակներից:

Վահան Տերյանն էլ է դիպուկ բնութագրել. «Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն բար»: «Հայաստանի քարանձավախուզական ակումբ ԱՆ չղջիկ» («Armenian Speleo Club: Black Bat»)՝ի հիմնադիր, քարանձավախույզ, Հայաստանի ալպինիզմի ֆեդերացիայի անդամ Արտավազը Ջանոյանի նախաձեռնությամբ փետրվարի 25-ին կազմակերպվեց արշավ դեպի Քասախի կիրճ: Նպատակն էր ծանոթանալ Օհանավան գյուղի մոտակա տարածքի պատմական հուշարձաններին: Արշավախմբի կազմում էին Ա. Ջանոյանը կնոջ՝ տուր-մենեջեր, իրավաբան Արուսյակ Եփրեմյանի հետ, քարանձավագետ Սմբատ Գավթյանը, արշավական Անդրանիկ Բուրջանյանը, ուրարտագետ Եղուարդ Մելիքյանը, հուշարձանագետ Օնիկյան Խաչատրյանը, ԱՄՆ-ից հայրենիք վերադարձած Պատրիկը, որը ԱՄՆ-ում նախկինում եղել է փրկարար ծառայության աշխատակից, մասնակցել է Արցախյան 44-օրյա պատերազմին, մարտադաշտում ծանոթացել հայտնի քարանձավագետ Սամվել Շահինյանի հետ և դարձել նաև արշավական: Ա. Շահինյանի առաջարկով խմբի հետ էինք նաև ես ու դուստրս՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Ընթրյանը: Ընթացքում այցելեցինք Հովհաննավանք, որը գտնվում է գյուղի եզրին՝ Քասախ գետի աջակողմյան ափին: Վանական համալիրում մոտ 1000 տարի շինարարական աշխատանքներ են ընթացել 4-13-րդ դարերում: Ըստ ավանդույթի՝ վանքը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը՝ կառուցելով Սուրբ Կարապետ բազիլիկ եկեղեցին: Սա խոսում է այն մասին, որ եկեղեցու տեղում հնարավոր է ավելի վաղ գործել է հեթանոսական սրբատեղի: Վանքը նախապես կոչվել է Գր. Լուսավորչի կողմից վանահայր նշանակված Սյուրիի անունով: 17-րդ դարի պատմիչ Առաքել Գավրիսեցին Օհանավանք-Հովհաննավանքի անունը կապում է 5-րդ դարի նշանավոր պատմիչ Դազար Փարպեցու հետ, որը Հայաստանի մարգարան Վահան Մամիկոնյանի կողմից նշանակվել է վանքի վանահայր, թարգմանիչ: Հնարավոր է՝ հենց այստեղ էլ գրել է իր հռչակավոր «Պատմություն հայոց» աշխատությունը: Փարպեցին իր փոխարեն վանահայր է նշանակել Հովհանն անունով հոգևորականին, և նրա անունով էլ վանքը կոչվել է Հովհաննավանք: Վանքի առաջին եկեղեցու Սուրբ Կարապետ անվանումը կապվում է Հայաստանում քրիստոնեական առաջին եկեղեցիներից մեկը լինելու հանգամանքի հետ. (Արարպետ-առաջին): 573թ. վանքի առաջնորդ Աշուր Գվինեցին եկեղեցու փայտե ծածկը փոխել է քարե թաղով: Սուրբ Կարապետը վերակառուցվել է նաև 1652թ.:

Օհանավան գյուղում է 1627թ. ծնվել և 13 տարեկանից մինչև կյանքի վերջը՝ 1699թ. Հովհաննավանքում կյանքն անցկացրել հայ նշանավոր պատմիչ Ջաքարիա Քանաքեռցին: Վախճանվելուց փոքր-ինչ առաջ է Քանաքեռցին ավարտել իր երկհատորանոց «Պատմագրություն» աշխատությունը, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը Արշակունիների ժամանակներից մինչև 17-րդ դարի վերջը: Հովհաննավանքի մասին միջնադարի հայ պատմագիր, մեկնիչ, աստվածաբան, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ Վարդան Արևելցին (1198-1271) իր «Աշխարհացոյց»-ում գրում է. «Այլ եւ սուրբ ուխտն (ժ) Յոհաննավանք, ուր կայ շնորհաբեր սուրբ Կարապետին եւ (ժ) վարչանակն Քրիստոսի, եւ Սուրբ Բեռեռն Աջոյ ձեռին, եւ Սուրբ Աջն Նախավանքին...» (էջ՝ 10):

Հաջորդ սրբավայրը, որ այցելեցինք, Օհանավանում պահպանված Սուրբ Հովհաննես կամ Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին է: Օհանավան գյուղի հյուսիս-արևելյան կողմում՝ Քասախ գետի կիրճի աջ եզրին է Արագածոտնի վաղ շրջանի Սերկիկ կոչվող գյուղատեղի: Այն միջնադարում հարավից կապված է եղել Հովհաննավանքի, արևմուտքից՝ Ուշիի, հյուսիսից՝ Սաղմոսավանքի, իսկ արևելքից՝ Քասախի կիրճով եղվարդի հետ: Հնուն այստեղով անցել է Արարատյան դաշտից դեպի հյուսիս ուղղված արքունական ճանապարհներից մեկը: Եվ պատահական չէ նաև այն, որ եկեղեցու հարևանությամբ է ավելի վաղ շրջանում այստեղ գոյություն ունեցող կիկլոպյան հզոր ամրոցը:

Սերկիկի գյուղի մասին առաջին անգամ հիշատակվում է 1021թ.: 11-12-րդ դարերում ապրած հայ պատմիչ Մաթեոս Ուռուխյեցին իր «Ժամանակագրություն»-ում (Երևան 1973թ.) գրում է Հայոց սպարապետ Վասակ Պաղատունի Իշխանի մասին, որը եղել է Գրիգոր Հանգեի և Շուշանի որդին, Վահրամ Պաղատունու եղբայրը, Գրիգոր Մագիստրոս Պաղատունու հայրը: Նա գուժակնից լսելով, որ դեմիկները (իրականում՝ վերջիններիս մոտ ծառայության անցած թուրքեր) գրավել են ողջ Նիզ գավառը, որն իր տիրապետության տակ էր այդ ժամանակ, 500 հոգով իր Քջնի ամրոցից շտապում է դիմակայելու թշնամուն՝ արգելելու նաև թշնամու առաջխաղացումը դեպի մայրաքաղաք Անի: Պատմիչը գրում է. «Վասակը հասավ մի վանք, որտեղ ինքը և ամբողջ զորքը հա-

ղորդություն ստացան...»: Երևի նկատի ունի Սաղմոսավանքը: Այնուհետև շարունակում է. «Ճանապարհին նրանք հանդիպեցին մի գյուղի և ականատես եղան, թե ինչպես այլազգիները գլխավոր կտորել էին գյուղի բնակչությանը, ինչպես նրանք շրջապատել էին եկեղեցին և անմեղ սրբախոյտը էին անում ներսում ապաստանած հավատացյալներին: Քաջ Վասակը, տեսնելով դա, առյուծի պես մռնչացավ և հարձակվեց այլազգիների զորքի վրա և կտորեց մոտ երեք հարյուր հոգի, մնացածները փախուստի դիմելով՝ միացան այլազգիների հիմնական զորաբանակին» (էջ՝ 8): Պատմիչը հիշատակում է Սերկիկ վանքը, որի ժայռերից մեկի հովին հանգստացել էր Վասակը մարտից հետո: Ցավով նշում է նաև՝ քնած ժամանակ նրան հրում, և ծորն է գցում փախստական գյուղացիներից մեկը: Քասախի կիրճի աջ ափին՝ Սաղմոսավանքից հարավ կա Վասակամուտ անունով ամրոցատեղի:

Սերկիկի գյուղի և 1021թ. ճակատամարտի մասին հիշատակել են միջնադարյան այլ մատենագիրներ ևս: Վարդան Արևելցին «Պատմություն»-ում գրում է. «Ի չորեքարիւր եօթանասուն թուին(470+551=1021) ել ՏուրղիլեւԲէկն եւ պատահեաց մնա ՚ի Նախճաւանի Լիպարիտն հինգ հազար հեծելօք, եւ փախեաւ յախազին բազմութենէ, եւ ՚ի գալ Թուրքին ՚ի Դուլին եւ սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, եւ ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ ՚ի Սերկիկի, եւ ՚ի հանգչելն անդ սակաւ մի ընով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի» (էջ՝ 141): Այդ մասին Մարմաշենի մայր եկեղեցու պատին 1029թ.Վահրամ Պաղատունին թողել է 18 տողանոց արձանագրություն եկեղեցու կառուցման (988-1029թթ.) մասին: Շինարարության վրա աշխատել են նաև Պաղատունու մայրը՝ Շուշանիկը և եղբայրները, որոնցից. «...ԵՒ ԵՂՐԱՐԷ ԻՄ ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆ, ՈՐ ՆԱԳՆԱՍԱԿԵՑԱՒ Ի ԹՈՒՐԲԱՏ ՊԱՏԵՐԱՍՄԻ...» Հիշատակվում է նաև՝ 1029թ.

Սերկիկի գյուղից մի այգի սպարապետ Վահրամ Պաղատունին նվիրել է Մարմաշենին: Գյուղատեղիի արևելյան մասում՝ Քասախի կիրճի եզրին է կիսակործան սրբատունը, որը կառուցվել է 10-րդ դարում Պաղատունի իշխանական տան կողմից: Միանավ բազիլիկ եկեղեցու հարավային կողմում ավելի ուշ՝ 13-րդ դարում Վաչուսյանների կողմից կառուցվել է գավիթը, որի ծածկն ամբողջությամբ քանդված է, և պահպանվել են կիսով չափ պատերը: Սուտքը



եղել է եկեղեցու արևմտյան կողմից: Արևմտյան պատը, որն ունեցել է քանդակազարդ խաչքար, քանդակվել է 1918թ. հունվարի 6-ի երկրաշարժից: Պահպանվել է գույգ կամարների վրա նստած թաղի արևելյան մասը: Հայկական եկեղեցաշինության կանոնների համաձայն՝ Սուրբ խորանը արևելքում է, սակայն երկու կողմում չունի ավանդատներ: Եկեղեցու և գավիթի պատերին կան արձանագրություններ, խաչքարանդակներ: Ցավոք, միջնադարյան հիմնական արձանագրություններին զուգահեռ՝ 20-րդ դարում, նաև մեր օրերին շատ այցելուներ իրենց անուններն են քանդակել պատերին, աղավաղել իսկականը: Եկեղեցու և գավիթի ավերման հիմնական պատճառը 1827թ. Կեչառիսի (կամ Ծաղկածորի) և 1840թ. Արարատյան երկրաշարժներն էին:

1831թ. այստեղ այցելած Հայկական մարզի տնտեսական մասի կառավարիչ Իվան Շուպենը գրել է. «Բավականին լեռնոտ տեղանքում գտնվում են հրաշալի Սուրբ Հովհաննես վանքի ավերակները՝ փլված 1827թ. երկրաշարժի ժամանակ»: Այդ երկրաշարժի փլվել էին նաև հարևան Ուշիի Ար. Սարգիս վանքի շինությունները, վնասվել են Հովհաննավանքը, այլ սրբատներ: Եկեղեցու հյուսիսային կողմում պահպանվել են Ք.Ա.2-րդ հազարամյակում հիմնված կիկլոպյան ամրոցի հենապատերը, ինչպես նաև՝ վաղ միջնադարում կառուցված ամրոց-դղյակի պատերը, որոնք շարված են մեծ քարերով և ունեն մոտ 3մ հաստություն: Պահպանված մասում երևում են կառույցների հիմքեր, արևելյան պատի հյուսիսային կողմում կա մուտք, որը մոտ է նաև Քասախի կիրճին: Գտնվելով կարևոր ճանապարհի վրա՝ Սերկիկ կոչվող բնակատեղին, որն ունի մոտ 4-հազարամյա պատմություն, գոյատևել է մինչև 17-րդ դարը: 1350թ. Վաչուսյան տոհմի իշխաններից Թեոդորոս Չրեքինը Սերկիկ գյուղն ամբողջությամբ մվիրել Հովհաննավանքին: Այս գյուղատեղիի մոտով ժամանակին անցել է պատմական ճանապարհը: Այժմ էլ ձոր իջնող գրունտային ճանապարհ կա: Իջնում ենք ծորը: Ա. Ջանոյանը ցույց է տալիս վերջերս Քասախի ծախ ափին հայտնաբերված ժայռափոր դամբարանը, որի մասին հանդես կգամ հետագայում, երբ հնագետներն ավարտեն պեղումներն ու ուսումնասիրությունները:

Անցնում ենք Քասախի կիրճով ու հիանում բնության կերտած հրաշքներով: Երբեմն-երբեմն երևում են քարանձավներ, որոնց մուտքերի մոտ պատեր են շարված: Երևում է նաև պատմական ճանապարհը, որի եզրերին նույնպես պատեր կան: Ոլորապտույտ ճանապարհը գետի ծախակողմյան լանջով ոլորապտույտ վեր է բարձրանում:

Հաջորդ սրբատունը ծորում, որ հանդիպում ենք, գետի ծախ ափին է՝ կարմրավուն ժայռերի մեջ: Ճանապարհին դեռևս խորհրդային տարիներին տեղադրված հայերեն և ռուսերեն ցուցանակ կա. «Ժայռափոր եկեղեցի Ս. Աստվածածին, 13-րդ դար»: Նշված է նաև. «Պահպանվում է պետության կողմից»: Սիմեոն Երևանցի կաթողիկոսն է նշել, որ եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին:

Ժամանակի սղության պատճառով այս եկեղեցի չենք մտնում, բացի դրանից նաև գետը պետք է անցնեցինք:

Ա. Ջանոյանն ասաց, որ սրբավայրը կոչվում է նաև «Կարմիր վանքեր»՝ հավանաբար կարմրավուն ժայռերի պատճառով: Նկարագրեց եկեղեցու ներքը. «Քարանձավներից մեկի մեջ կա մի նեղ ու երկար անցք՝ խողովակ, որը տանում է դեպի երկրորդ հարկը»: Հնարավոր է՝ ժամանակին նշված քարանձավները եղել են ճգնարաններ, հնարավոր է՝ ապաստարան: Իսկ 12-13-րդ դարերում այստեղ հիմնվել է անապատ-եկեղեցի: Նման եկեղեցիներ կային նաև Քաշաթաղի շրջանում. Քրոնքի վանքը, Հոչանցի անապատը, Անդրկաթերդի ժայռափորը, Եղեզնու ծորինը և այլն: Երբ դեռ հայկական էր Քաշաթաղի շրջանը, այս ժայռափոր եկեղեցիներ և տարածքում գոյություն ունեցող քարանձավներ մի քանի անգամ այցելեցին միջազգային քարանձավագիտության ակումբի անդամներ՝ Սամվել Շահինյանի հրավերով: Ուղեկցում էի նրանց: Հատկապես տպավորված էին Հոչանցի անապատով ու Քրոնքի վանքով:

Շարունակում ենք ճանապարհը: Կիրճի հյուսիսային կողմում երբեմն իր վեհությամբ երևում է Սաղմոսավանքը: Մեկ-մեկ միայն գմբեթներն են երևում՝ միաձուլված կիրճի ժայռերի հետ: Գետի ափով նաև խմելու ջրի խողովակներն են անցնում՝ կառուցված մոտ 60 տարի առաջ: Հասնում ենք տարածքի պատմական հուշարձանների մեջ հայտնի Գրիգոր Լուսավորչի անապատ կոչվող հնավայր: Խորհրդային տարիներին այս հատվածում ինչ-որ շենքեր են կառուցվել ջրատարի հետ կապված: Այս կառույցները որոշակի դժվարացրել են ավելի վերևում գտնվող սրբատեղի բարձրանալը: Ժայռերի մեջ երևում են միջնադարյան պարսկապատեր, որոնց մի մասը շարված է գերանների վրա: Տեղացիները սրբավայրը կոչում են նաև «Կաթնով աղբյուր»՝ կապված տեղում առկա աղբյուրների, նաև հանքային ջրերի հետ: Ըստ ավանդույթի, այս անապատը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը՝ ձմեռները ցրտերի պատճառով իջնելով Արագածի լանջերից, որտեղ ճգնում էր: Նա այստեղ կառուցել է երկու անապատ, մեկը՝ կիրճում, որը հետագայում անվանվել է Լուսավորչի անունով, մյուսը՝ կիրճի եզրին, ներկայիս Սաղմոսավանքի տեղում, որտեղ մշտապես պարապել են սաղմոսերգությանը:

Կիրճում հիմնած Անապատը նաև ունեցել է պարիսպ հարավային կողմում, որտեղով ծորակ է իջնում: Այս ծորակում նույնպես մի քանի քարանձավ կա, որոնք, հնարավոր է՝ եղել են ճգնարաններ: Անապատի եկեղեցին ուղղանկյուն հատակագծով միանավ բազիլիկա է: Ներքուստ խորանի երկու կողմերում ունի ավանդատներ: Վառույցի արևմտյան պատը կից է ժայռին, որն ունեցել է որոշակի խորություն: Միջնադարյան հանձարեղ ճարտարապետ-շինարարն օգտվել է դրանից, և սրբատան այս հատվածը ներսից ունի կիսաշրջան խորան՝ գնդաձև գմբեթադրով երիզված կամարով: Սրբատաշ մուգ գույնի տուֆից ու կրաշաղպիտով կառուցված եկեղեցու մուտքը եղել է հարավային կողմից: Արևելյան պատը, որի ներսի կողմում է Սուրբ Խորանը, փոքր պատուհան ունի՝ վերևում քանդակազարդ քար: Ենթադրվում է, որ անապատի ներկայիս շինությունը կառուցվել է 12-13-րդ դարերում: Արևելյան պատին ներսի կողմում արձանագիր քար կա, սակայն՝ դժվարընթեռնելի: Կան հիշողություններ, որ այս անապատում շատ գրիչներ ու ծաղկողներ են գործել: 1736-1742թթ. անապատի վանահայր եղել է Ավետիք վարդապետը, որից հետո սրբավայրը դադարել է գործել:

Անապատի եկեղեցին ու պարիսպներն սկզբնապես վնասվել են 1679թ. Արարատյան երկրաշարժից: Եկեղեցին վերջնականապես կործանվել է 1827թ. Փաղկածորի երկրաշարժից, երբ կիրճի վերին հատվածից պրկված խոշոր ժայռաբեկորը շինությունը վերածել է փլատակների: Այժմ կործանված վիճակում գտնվող այս սրբատունը պեղումների, հողից ու քարերից մաքրելու և հիմնանորոգման կարիք ունի: Երևան վերադառնալիս այցելեցինք Օհանավան գյուղի բնակիչ Վահանուշ Բաղդասարյանի տնամերձ այգի, որը գտնվում է գյուղի եզրին՝ Քասախի կիրճի աջակողմյան պոնկին:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Հոհրաբը՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմոն» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մասով: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 18.03.2024թ.: